Արմավիրի մարզի «Մերձավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հաստատում եմ

Տնօրեն՝ Զ.Ստեփանյան

Թեմատիկ պլանավորում

2023-2024 ուստարի

Տարեկան

Առարկան Հայոց պատմություն

Դասարան XI

Ժամաքանակ 68

Ուսուցիչ Կարեն Սարգսյան

Պահպանված է ուսպլանով նախատեսված ժամաքանակը

Փոխտնօրեն՝ Ս.Հարությունյան

Համապատասխանում է պետական չափորոշչին և ծրագրին

Մ/մ նախագահ՝ Վ.Սարգսյան

Թեմատիկ պլանավորում
«Հայոց պատմություն» /ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսք /
11-րդ դասարան
Շաբաթական 2 ժամ
Տարեկան 68 ժամ

Դասագրքի հեղինակներ՝ Հայոց պատմություն: 11-րդ դասարան: Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր: /Ա.Մելքոնյան, Պ.Չոբանյան, Ա.Սիմոնյան, Ա.Նազարյան, Վ.Բարխուդարյան, Է.Գևորգյան, Կ,Խաչատրյան: Երևան, Զանգակ, 2015

Ներածություն		
Նպատակ		Նպաստել XVII դարի երկրորդ կեսից մինչև XX դարասկզբին առնչվող հայ ժողովրդի պատմության կարևոր իրադարձությունների և հիմնահարցերի մասին ընդհանուր պատկերացման ձևավորմանը և դրանց վերաբերյալ դիրքորոշում ունենալու կարողությունների ձևավորմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա** • ներկայացնել ուսումնական տարվա ընթացքում անցնելիք նյութի հիմնական բովանդակությունը • ընդհանուր գծերով բնութագրել ժամանակաշրջանը, • ըստ ժամանակագրության թվարկել 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարասկիզբի կարևոր փաստերը, իրադարձությունները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/1/		Ներածություն
Մաս Գ **ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ**		
Բաժին 1 **ՊԱՅՔԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ /17-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ** **(9 ժամ)**		
Գլուխ 1 **Ազատագրական շարժումները 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարում** **/6 ժամ /**		
Նպատակ	Նպաստել 17-րդ դարավերջին և 18-րդ դարում հայ ժողովրդի ազատագրական պայքարի աշխուժացման նախադրյալների և ընթացքի մասին գիտելիքների ձեռքբերմանը, ազատագրական պայքարի կարևոր փաստերն ու իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:	
Վերջնարդյունքներ	**Կարողանա**	

	• բացատրել ազատագրական պայքարի աշխուժացման նախադրյալները XVII դարավերջին, պայքարի հիմնական արդյունքները: • բացատրել Հայաստանի ազատագրության խնդրում եվրոպական պետությունների հետ կապված հույսերի ձախողման պատճառները • վերլուծել Արցախի և Սյունիքի զիվախ պայքարի արդյունքները /XVIII դ. 20-ական թթ.. • վերլուծել և արժևորել դարաշրջանի ազատագրական պայքարի կարևորագույն դրվագները և գործիչների գործունեությունը:	
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/2/	6-9	1.Ազատագրական պայքարի նոր փուլը
1/3/	10-14	2.Ազատագրական զինված պայքարն Արցախում
1/4/	15-17	3.Սյունիքի հայկական իշխանությունը
1/5/	18-19	4.Զինված պայքարի արդյունքները և Պարսկաստանի նոր քաղաքականությունը
1/6/	20-23	5.Ազատագրական պայքարը 18-րդ դարի երկրորդ կեսին
1/7/	23-26	6.Հնդկահայ ազատագրական կենտրոնը
1/8/	27-32	1-2. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին
Գլուխ 2 Հայոց պետականության վերականգնման խնդիրը 19-րդ դարի առաջին կեսին /3 ժամ /		
Նպատակ		Նպաստել 19-րդ դարասկզբի հայոց պատմության մասին գիտելիքների ձեռքբերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերն ու իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա** • ներկայացնել Արևմտյան և Արևելյան Հայաստանի վարչատնտեսական վիճակը XIX դ. սկզբին • համեմատել ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների կարևոր իրադարձությունները, հաշտության պայմանագրերը • բացատրել ցարական վարչական ռեֆորմներն ու ցույց տալ ցարիզմի վերաբերմունքը հայոց եկեղեցու նկատմամբ • դիրքորոշում հայտնել Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացման վերաբերյալ:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/9/	32-35	3.Արևմտյան Հայաստանը 19-րդ դարի սկզբներին և ռուս-թուրքական պատերազմները
1/10/	35-39	4.Հայաստանը 19-րդ դարի 30-40-ական թվականներին

1/11/		Կրկնություն
1/12/		Թեմատիկ գրավոր աշխատանք

Բաժին 2
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ
(25 ժամ)

Գլուխ 1
Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը
/3 ժամ/

Նպատակ	Նպաստել Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, Արևելյան և Արևմտյան Հայաստանի վիճակը տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերն ու իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ	**Կարողանա՝** • Բնութագրել Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակը • Բացատրել տնտեսության. արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ 19-րդ դարում տեղի ունեցած մի քանի փոփոխությունները • Թվարկել արդյունաբերության և տնտեսության ամենազարգացած ճյուղերը: • Համեմատել Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ տնտեսական վիճակը • Բացատրել կարևոր եզրույթները

Ժամ	**Էջ**	**Դաս**
1/12/	39-42	1. Արևելյան Հայաստանի տնտեսական և սոցիալական կյանքը:
1/13/	42-44	2.Ռուսաստանի գաղութային քաղաքականությունը և արևելահայերի ազգային ու սոցիալական շարժումը:
1/14/	44-47	3.Արևմտահայերի տնտեսական և սոցիալական դրությունը:

Գլուխ 2
Հայկական հարցի միջազգայնացումը
/2 ժամ /

Նպատակ	Նպաստել աշակերտների մոտ 19-րդ դարի երկրորդ կեսի ռուս-թուրքական պատերազմների մասին Հայկական հարցի և դրա դրսևորումների մասին գիտելիքների ձեռքբերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերն ու իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբեր-մունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ	**Կարողանա՝** • բացատրել Արևելյան Հարցի էությունը, Հայկական հարցի բովանդակությունը 19-րդ դարի վերջին • ներկայացնել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ճակատի կարևոր ռազմական գործողությունները, հայազգի նշանավոր զորահրամանատարներին • համեմատել և արտահայտել վերաբերմունք Սան-Ստեֆանոյի 16-

		դդ և Բեռլինի 61-րդ հոդվածների վերաբերյալ:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/16/	54-58	1.Արևելյան հարցի սրումը: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայերը:
1/17/	58-62	2.Հայկական հարցի միջազգայնացումը:
Գլուխ 3 Հայ քաղաքական կյանքի վերելքը /4 ժամ/		
Նպատակ		Նպաստել՝ հասարակական և քաղաքական հոսանքների, ազգային հասարակական շարժումների, ազատագրական կազմակերպությունների, ազգային կուսակցությունների մասին գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ ժամանակա-շրջանի կարևոր փաստերն ու իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** • ներկայացնել և բացատրել 1862 թ. Զեյթունի ապստամբությունը, 19-րդ դարի 2-րդ կեսի ազգային-հասարակական շարժումները , խմբակները. կազմակերպությունները, կարևոր գաղափարները, գործունեությունը: • վերհանել հայ քաղաքական կյանքի վերելքի պատճառները: • համեմատել 19-րդ դարի 2-րդ կեսի ազգային-հասարակական շարժումները , խմբակները. կազմակերպությունները, կարևոր գաղափարները, գործունեությունը • վերլուծել ազատագրական պայքարի հայտնի կազմակերպիչների, ղեկավար գործիչների և քաղաքական ուժերի /կազմակերպություններ, կուսակցություններ/ դերը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/18/	55-58	1. Հասարակական քաղաքական հոսանքները:
1/19/	58-61	2. Ազգային հասարակական հոսանքները:
1/20/	62-66	3. Պայքարի նոր գաղափարախոսությունը: Ազատագրական գաղափարներ:
1/21/	67-71	4 .Հայ ազգային կուսակցությունները
1/22/	**Գործնական աշխատանք**	
Գլուխ 4 Ազատագրական պայքարի զինված փուլը /3 ժամ /		
Նպատակ		Նպաստել ազատագրական պայքարի վերելքի, արևմտահայերի ցեղասպանության սկզբի մասին գիտելիքների ձեռքբերմանը, 19 դդ դարի կարևոր փաստերն ու իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա** - համեմատել և վերլուծել ազատագրական պայքարի կարևոր դրվագները, հայտնի ղեկավար գործիչներին, նրանց գործունեությունը - ներկայացնել և վերլուծել հայդուկային շարժման առաջացման պատճառները և դերը: • բացատրել պանթյուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարները,

		• վերլուծել մեծ տերությունների դիրքորոշումը 1894-1896 թթ. հայերի ցեղասպանության նկատմամբ:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/23/	71-75	1 Ազատագրական պայքարի վերելքը: Հայդուկային շարժում:
1/24/	76-79	2 Արևմտահայերի ցեղասպանության թուրքական ծրագրի իրագործման սկիզբը:
1/25/	79-83	3 Ազատագրական պայքարը 1894-1896 թթ.: Հայկական հարցը և տերությունները:
Գլուխ 5 **Հայ ազատագրական շարժումները 20-րդ դարի սկզբին** **/ 5 դասաժամ /**		
Նպատակ		Նպաստել 20-րդ դարասկզբի Արևելյան և Արևմտյան Հայաստանի դրության, Օսմանյան և Ցարական գաղութային քաղաքականության դրսևորումների և դրա դեմ հայ ժողովրդի պայքարի մասին գիտելիքների ձեռքբերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները բացատրելու, համեմատելու, համադրելու, դրանց վերաբերյալ դիրքորոշումներ հայտնելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա** • ներկայացնել և մեկնաբանել . ցարական իշխանությունների հակահայ քաղաքականությունը • ներկայացնել և վերլուծել 20-րդ դարասկզբի ազատագրական շարժումները • բացատրել երիտթուրքերի առաջ քաշած ազգայնական գաղափարախոսությունները և երիտթուրքերի նկատմամբ հայ ազգային կուսակցությունների դիրքորոշումը • ներկայացնել և բացատրել 1914 թ. հայկական բարենորոգումների մասին ռուս-թուրքական համաձայնագիրը, դրա արդյունքները հայ ժողովրդի համար
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/26/	84-88	1.Պայքար ցարիզմի հակահայ քաղաքականության դեմ
1/27/	88-90	2.Արևելյան Հայաստանը 1907-1914թթ
1/28/	90-95	3.Ազատագրական պայքարն Արևմտյան Հայաստանում 20-րդ դարի սկզբին
1/29/	95-98	4.Երիտթուրքերի հեղաշրջումն ու արևմտահայերը
1/30/	98-103	5.Հայկական հարցը 1912-1914թթ
Գլուխ 6 **Հայաստանը և հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտի տարիներին :** **/8 ժամ /**		
Նպատակ		Նպաստել Առաջին աշխարհամարտի, դրանում հայ ժողովրդի մասնակցության, Հայոց մեծ եղեռնի և ինքնապաշտպանական մարտերի, հայության նյութական և մարդկային կորուստների, Ռուսաստանյան հեղափոխությունների ժամանակ հայ ժողովրդի դրության, Մայիսյան հերոսամարտերի և ՀՀ հռչակման մասին գիտելիքների ձեռքբերմանը, XX դդ դարասկզբի կարևոր փաստերն ու իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** • Թվարկել Առաջին աշխարհամարտի և Կովկասյան ռազմաճակատի

		կարևոր ճակատամարտերը, հայ կամավորական ջոկատները, դրանց հրամանատարներին: • բացատրել Հայոց մեծ եղեռնի իրականացման փուլերը • Վերլուծել մեծ տերությունների դիրքորոշումը 1915-1916 թթ. հայերի ցեղասպանության, Նեմեսիս գործողության նկատմամբ և արտահայտել վերաբերմունք: • Վերլուծել Գերմանիայի և Օսմանյան կայսրության պատասխանատվությունը հայերի բնաջնջման գործում: • Վերլուծել Ռուսատանում հեղափոխությունների ազդեցությունը Հայաստանի և հայ ժողովրդի ճակատագրում: • Բացատրել Ռուսաստանի բոլշևիկյան կառավարության դիրքորոշումը Հայկական Հարցի նկատմամբ • Արժևորել 1915 թ ինքնապաշտպանական մարտերը, Մայիսյան հերոսամարտերն ու դրանց պատմական նշանակությունը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/31/	103-107	Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատը:
1/32/	107-112	Հայ կամավորական շարժումը
1/33/	112-118	Հայոց մեծ եղեռնը
1/34/	118-124	Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի սկիզբը
1/35/	124-129	Հայ ազգային-քաղաքական կյանքի վերելքը 1917թ Փետրվարյան հեղափոխությունից հետո
1/36/	129-133	Բոլշևիկյան հեղաշրջումը և Հայաստանը
1/37/	133-137	Իրադրությունը Հայաստանում և Այսրկովկասում /1918թ հունվար –ապրիլ/
1/38/	137-144	1918 թ. Մայիսյան հերոսամարտերը
1/39/	**Կրկնություն**	
Բաժին 3 **ՊԱՅՔԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ /17-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ /** **(9 ժամ)**		
Գլուխ 1 **Մշակույթը 17-րդ դարի 2-րդ կեսին և 19-րդ դարի 1-ին կեսին** **/ 2 ժամ /**		
Նպատակ		Նպաստել 17-րդ դարի 2-րդ կեսից մինչև 19-րդ դարի 1-ին կեսի հայկական մշակույթի ուղղությունների, գործիչների, կարևոր ձեռքբերումների վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, ազգային մշակույթի զարգացման պայմանները, օրինաչափությունները, ընդհանրությունները, առանձնահատկությունները, համեմատելու, բացատրելու, մեկնաբանելու, վերլուծելու, դիրքորոշում հայտնելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:

Վերջնարդյունքներ		Կարողանա՝ • Բացատրել տվյալ ժամանակաշրջանի հայկական մշակույթի զարգացման պայմանները, • Թվարկել մշակույթի զարգացման կենտրոնները և ուղղությունները, • Ներկայացնել, համեմատել և բնութագրել մշակույթի հիմնական ձեռքբերումներն ու արդյունքները, նշանավոր գործիչներին և նրանց հայտնի ստեղծագործությունները • Գնահատել և արժևորել հոգևոր և նյութական արժեքների ստեղծման, պահպանման ու զարգացման գործում ազգային, հոգևոր կառույցների և անհատների դերը:
Ժամ	Էջ	Դաս
1/40/	144-147	Մշակութային ձեռքբերումները 17-րդ դարի 2-րդ կեսին և 18-րդ դարի 1-ին կեսին
1/41/	148-152	Հայ մշակույթը 19-րդ դարի 1-ին կեսին

Գլուխ 2. XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի մշակութային վերելքը
/5 դասաժամ /

Նպատակ	Նպաստել XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի հայկական մշակույթի ուղղությունների, գործիչների, կարևոր ձեռքբերումների վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, ազգային մշակույթի զարգացման պայմանները, օրինաչափությունները, ընդհանրությունները, առանձնահատկությունները, համեմեատելու, բացատրելու, մեկնաբանելու, վերլուծելու,դիրքորոշում հայտնելու, գնահատելու,արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ	Կարողանա՝ • Բացատրել տվյալ ժամանակաշրջանի հայկական մշակույթի զարգացման պայմանները, • Թվարկել մշակույթի զարգացման կենտրոնները և ուղղությունները, • Ներկայացնել, համեմատել և բնութագրել մշակույթի հիմնական ձեռքբերումներն ու արդյունքները, նշանավոր գործիչներին և նրանց հայտնի ստեղծագործությունները • գնահատել և արժևորել հոգևոր և նյութական արժեքների ստեղծման, պահպանման ու զարգացման գործում ազգային, հոգևոր կառույցների և անհատների դերը:

Ժամ	Էջ	Դաս
1/42/	153-155	Հայ մշակույթի կենտրոնները: Կրթական համակարգը
1/43/	156-160	Բնական և հումանիտար գիտությունների զարգացումը
1/44/	156-160	Բնական և հումանիտար գիտությունների զարգացումը
1/45/	161-163	Գրականությունը և մամուլ
1/46/	164-168	Արվեստը և ճարտարապետությունը

Գլուխ 3
Հայկական գաղթավայրերի դերը հայապահպանության և մշակույթի զարգացման գործում (XVII դարի երկրորդ կես-XX դարի սկիզբ)

/2 դասաժամ /		
Նպատակ		Նպաստել XVII դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին հայապահպանության և մշակույթի զարգացման գործում հայկական գաղթավայրերի և գաղութահայության մասին գիտելիքների ձեռքբերմանը, գաղթավայրերի առաջացման պատճառները, գործընթացները, կարևոր փաստերն ու իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու , վերաբերմաունք արտահայտելու, գաղթավայրերի դերը հայապահպանության գործում արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** • ներկայացնել և վերլուծել հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները, ընթացքը: • Թվարկել ժամանակի հայաշատ գաղթավայրերը, գաղութահայ նշանավոր գործիչներին Գնահատել հայկական գաղթավայրերի հայապահպան դերը
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/47/	168-170	Ասիայի, Աֆրիկայի, Ռուսաստանի, Եվրոպայի և ԱՄՆ-ի հայկական գաղութները
1/48/	170-174	Ասիայի, Աֆրիկայի, Ռուսաստանի, Եվրոպայի և ԱՄՆ-ի հայկական գաղութները
1/49/	**Թեմատիկ գրավոր աշխատանք**	
ՄԱՍ Դ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ		
ԲԱԺԻՆ 1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (11 ժամ)		
Գլուխ 1 Երկրի ներքին կյանքը /4 ժամ /		
Նպատակ		Նպաստել Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծ-ման մասին գիտելիքների ձեռքբերմանը, կարևոր փաստերն ու իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտե-լու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** • բացատրել ՀՀ ստեղծման, երկրի ծանր դրության, սպառնացող վտանգները, • ներկայացնել և համեմատել պատմական ժամանակաշրջանի կարևոր դեպքերն ու իրադարձությունները նշանավոր գործիչներին • բացատրել ՀՀ ստեղծման պատմական պայմանները, սոցիալ-

		տնտեսական և քաղաքական կյանքի առանձնահատկությունները • արժևորել Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումը • բացատրել Ամերկոմ, Արմենկոմ հասկացությունները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/50/	177-181	1. Հայկական պետականության ձևավորումն ու ամրապնդումը
1/51/	182-184	2.Սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքը
1/52/	185-188	3.Երկրի կայունությանը սպառնացող վտանգները
1/53/	188-190	4.Առաջին հանրապետության մշակութային կյանքը
Գլուխ 2. Հանրապետության միջազգային դրությունը Հայկական հարցը /5 ժամ /		
Նպատակ		Նպաստել ՀՀ միջազգային դրության, հարևանների հետ ունեցած տարածքային խնդիրների, Սևրի պայմանագրի մասին գիտելիքների ձեռքբերմանը, կարևոր փաստերն ու իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** • ներկայացնել ՀՀ-տարածքային խնդիրները և դիրքորոշում հայտնել դրամց վերաբերյալ • բացատրել Հայաստանի առաջին հանրապետության արտաքին քաղաքականության Անկախ և Միացյալ Հայաստանի՝ սկզբունքը • վերլուծել Սևրի հաշտության ՀՀ-ին վերաբերող հոդվածները և • մեկնաբանել պայմանագրի իրականություն չդառնալու պատճառները
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/54/	190-193	.ՀՀ արտաքին կապերը և հարաբերությունները
1/55/	193-197	.Հայ-ադրբեջանական հարաբերությունները
1/56/	197-203	-4 .Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում: Սևրի պայմանագիրը
1/57/	197-203	4 .Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում: Սևրի պայմանագիրը
1/58/	203-205	.Իրադրությունը Կիլիկիայում և կիլիկիայահայությունը
Գլուխ 3. Հայաստանի առաջին Հանրապետության անկումը /2 ժամ /		
Նպատակ		Նպաստել Հայաստանի առաջին Հանրապետության թուլացման և անկման շրջանի մասին գիտելիքների ձեռքբերմանը, ՀՀ-ՌԽՍԴՀ հարաբերությունների ՀՀ-ի համար կործանարար հանգամանքները, թուրք-հայկական պատերազմի և Հայաստանի խորհրդայնացման ընթացքը վերլուծելու, բացատրելու, գնահատելու, դիրքորոշում հայտնելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** • ներկայացնել ռուս-թուրքական և հայ-ռուսական

		փոխհարաբերությունները և դիրքորոշում հայտնել այդ փոխհարաբերությունների վերաբերյալ: • Վերլուծել Հայաստանի իշխանությունների համար ստեղծված արտաքին վտանգները, պատերազմի հետևանքներն ու պարտության և ՀՀ անկման պատճառները: • համեմատել Սևրի և Բաթումի, Սևրի և Ալեքսանդրապոլի պայմանագրերը: • հիմնավորել Հայաստանի խորհրդայնացման անխուսափելիու-թյունը: • բացատրել 1920թ. դեկտեմբերի 2-ին ստորագրված Երևանի համաձայնագրի նշանակությունը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/59/	206-210	1. Հայաստանը Խորհրդային Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի քաղաքականության ոլորտում
1/60/	210-213	2.ՀՀ խորհրդայնացումը
ԲԱԺԻՆ 2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (5 ժամ)		
Գլուխ 1 Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետություն /5 ժամ /		
Նպատակ		Նպաստել խորհրդային կարգերի ստեղծման, խորհրդային իշխանության առաջին տարիներին վարած քաղաքականության, ՀԽՍՀ տարածքային հիմնախնդիրների ԽՍՀՄ ձևավորման մասին գիտելիքների ձեռքբերմանը, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը համեմատելու, ԽՍՀՄ ձևավորման ընթացքը վերլուծելու, բացատրելու, գնահատելու, ՀԽՍՀ տարածքային հիմնախնդիրների վերաբերյալ դիրքորոշում հայտնելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** • ներկայացնել և բացատրել հարևան պետությունների հետ ՀԽՍՀ սահմանային խնդիրները և դրանց վերջնական լուծումները • համեմատել ՀԽՍՀ առաջին տարիների կարևոր իրադարձությունները, փաստերը, նշանավոր գործիչներին • բացատրել ռազմական կոմունիզմ, ՆԵՊ, Չեկա, ՌՀԿ հասկացությունները • վերլուծել և համեմատել տնտեսության մնագավառում խորհրդային իշխանության իրականացրած ռազմական կոմունիզմի և նէպ-ի, ծրագրերը, • բացատրել և վերլուծել Հայաստանի սահմանների վերաբերյալ Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, հայկական տարածքները օտարելու հիմնախնդիրների հակահայ և անօրինական բնույթը
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/61/	213-217	Խորհրդային իշխանության հաստատումը: Փետրվարյան ապստամբությունը:
1/62/	217-221	ՀԽՍՀ տարածքային հիմնախնդիրները և արտաքին կապերը Լոռու, Ջավախքի, Զանգեզուրի, Արցախի և Նախիջևանի

		խնդիրները
1/63/	217-221	ՀԽՍՀ տարածքային հիմնախնդիրները և արտաքին կապերը Լոռու, Ջավախքի, Զանգեզուրի, Արցախի և Նախիջևանի խնդիրները
1/64/	221-223	ՀԽՍՀ տարածքային հիմնախնդիրները և արտաքին կապերը: Հայկական տարածքների հարցը Մոսկվայի և Կարսի 1921 թ պայմանագրերում : ՀԽՍՀ արտաքին կապերը:
1/65/	223-226	ՀԽՍՀ տարածքային հիմնախնդիրները և արտաքին կապերը: Հայկական տարածքների հարցը Մոսկվայի և Կարսի 1921 թ պայմանագրերում : ՀԽՍՀ արտաքին կապերը:
1/66/		**Գործնական աշխատանք**
1/67/	226-230	ՀԽՍՀ Սահմանադրությունը : Խորհրդային Հայաստանն Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմում
1/68/	**Կրկնություն**	

Թեմատիկ աշխատանքներն ուսուցիչն՝ իր հայեցողությամբ, կարող է հանձնարարել թեմաներից հետո կրկնության համար նախատեսված ժամերի հաշվին:
Գործնական աշխատանքների հարցում ուսուցիչն ավելի ազատ է, դրանք կարող է հանձնարարել ցանկացած ժամի ընթացքում, կրկնության ժամերին կամ տանը:
Կիսամյակային աշխատանքները՝ կիսամյակի ավարտին, անհրաժեշտության դեպքում, տեղաշարժելով ամփոփիչ կրկնության կամ կրկնության համար նախատեսված ժամերը:

1. Ներածություն

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ ժամանակաշրջան է ընդգրկում 11-րդ դասարանի «Հայոց պատմության» դասընթացը:
2. Հայ ժողովրդի կյանքում ի՞նչ կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել այդ ժամանակաշրջանում:
3. Ինչպե՞ս կբնութագրեք հայ ժողովրդի կյանքում XVII դարի երկրորդ կեսից մինչև XX դարասկիզբն ընկած ժամանակահատվածը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 11-րդ դասարանի «Հայոց պատմության» դասընթացը ընդգրկում է XVII դարի երկրորդ կեսից մինչև XX դարի 20-ական թթ. ժամանակաշրջանը:
2. XVII դարի երկրորդ կեսից մինչև XX դարի 20-ական թթ. ընկած ժամանակաշրջանի նշանավոր գործիչների անուններ. Իսրայել Օրի, Դավիթ Բեկ:

(Նշել առնվազը 1-2 պատասխան):

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Ըստ ժամանակագրության թվարկել XVII դարի երկրորդ կեսից մինչև XX դարի 20-ական թթ.. ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած հետևյալ կարևոր իրադարձություններից առնվազը երկուսը. Արցախի և Սյունիքի ազատագրական պայքար, Հայոց եղեռն, Մայիսյան հերոսամարտեր, Հայաստանի առաջին հանրապետության ստեղծում և Հայաստանի խորհրդայնացում:
2. Բնութագրել այդ ժամանակաշրջանը որպես ազատագրական պայքարի, հասարակական-քաղաքական կյանքի վերելքի, նորանկախ պետության ձևավորման, միևնույն ժամանակ նաև հիասթափությունների, կորուստների դարաշրջան: (Նշել առնվազը 1-2 պատասխան)

ՊԱՅՔԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ /17-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ /

Գլուխ 1

Ազատագրական շարժումները 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարում

Դաս 1. Ազատագրական պայքարի նոր փուլը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր երկրների հետ էր կապում իր հույսը հայ ժողովուրդը թուրք-պարսկական լծից ազատագրվելու համար:
2. Նշեք նշանավոր գործիչների անուններ, ովքեր գործնական քայլեր ձեռնարկեցին պայքարը կազմակերպելու համար:
3. Ե՞րբ և ու՞մ ջանքերով են հրավիրվել՝ Էջմիածնի և Անգեղակոթի ժողովները:
4. Ինչու՞ չիրականացան Պֆալցյան և Մոսկովյան ծրագրերը:
5. Ինչպե՞ս կգնահատեք Իսրայել Օրու գործունեությունը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայ ժողովուրդը ազատագրության հույսը կապում էր Լեհաստանի, Ֆրանսիայի, Սրբազան Հռոմեական կայսրության, Ռուսաստանի, իտալական քաղաքների և պապականության հետ: (Նշել առնվազն 1-2 պատասխան):
2. Հայաստանի ազատագրությամբ այս ժամանակաշրջանում ակտիվորեն զբաղվել են հետևյալ նշանավոր գործիչները՝ Արիստակես կաթողիկոս, Հովհաննես Թութունջի, Մահտեսի Շահմուրատ, Խաչատուր Գաղատացի, Հակոբ Ջուղայեցի, Իսրայել Օրի: (Նշել առնվազն 1-2 գործչի անուն):
3. Էջմիածնի ժողովը տեղի է ունեցել Հակոբ Ջուղայեցու, իսկ Անգեղակոթի ժողովը՝ Իսրայել Օրու նախաձեռնությամբ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Համապատասխանեցնել գործիչներին, նրանց պաշտոնը / կաթողիկոս , զորավար / և նրանց գործունեությունը:

	Գործիչ		ուշտոն
	ինաս Վարդապետ	1	սրսկաստանում Ռուսաստանի դեսպան
	րայել Օրի	2	ույոց կաթողիկոս
	ակոբ Ջուղայեցի	3	սրգմանիչ

2. Լրացնել ժողովների տարեթվերը.

	Ժողով		ուրեթիվ
	ագեղակոթի ժողով	1	
	միածնի ժողով	2	

3. Բացատրել, որ Պֆալցյան ծրագիրը չիրականացավ, քանի որ Եվրոպական երկրները չհամաձայնվեցին օգնել Հայաստանի ազատագրության ծրագրին, իսկ Մոսկովյան ծրագիրը չիրականացավ, քանի որ

Ռուսաստանն իր այլ պատերազմներով զբաղված լինելով՝ չկարողացավ գործնական օգնություն ցույց տալ հայ ժողովրդին:

4. Գնահատել Իսքայել Օրու գործունեության նշանակությունը, որպես ազատագրական պայքարի կազմակերպիչ, քանի որ նա Հայաստանի ազատագրության ծրագրերը դրեց գործնական հողի վրա և կազմեց Հայաստանի ազատագրության առաջին ծրագրերը:

Դաս 2. Ազատագրական զինված պայքարն Արցախում

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ էր նախատեսվում ռուսական զորքերի Կասպիական արշավանքը:
2. Ի՞նչ է սղնախը:
3. Թվարկեք առավել հայտնի սղնախներիի անվանումներ:
4. Ե՞րբ թուրքական զորքերը ներխուժեցին Արարատյան դաշտ, թվարկեք ինքնապաշտպանության ամենակարևոր դրվագները:
5. Թուրքական զորքերի Արցախ ներխուժման ժամանակ ի՞նչ կարևոր դեպքեր են տեղի ունեցել:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Ռուսական զորքերի Կասպիական արշավանքը նախատեսվում էր 1722 թ.:
2. Սղնաղները հենակետային ամրոցներ էին:
3. 1724 թ. գարնանը թուրքական բանակը ներխուժում է Արարատյան դաշտ:
- 40 օր Կարբի գյուղի բնակիչները դիմադրեցին և թույլ չտվեցին, որ թշնամին մտնի գյուղ:
- Շուրջ 3 ամիս տևեց Երևանի պաշտպանությունը, որից հետո քաղաքն անձնատուր եղավ:
4. Արցախ ներխուժման ժամանակ նշանավոր էին Վարանդայի 1725 թ և Շուշիի 1726 թ ինքնապաշտպանությունները:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել առավել հայտնի հետևյալ սղնախների անունները. Շոշի, Քարագլխի, Ավետարանոցի, Գյուլիստանի, Զրաբերդի սղնախները: (Թվարկել առնվազն 2-3-ը)
2. Առանձնացնել և գնահատել նշված ժամանակաշրջանի կարևոր 2-3 դեպքեր (Կարբիի ինքնապաշտպանություն, թուրքական զորքի ոչնչացումը Վարանդայի գավառում, Շուշիի ինքնապաշտպանություն):
3. Քարտեզի վրա ցույց տալ Արցախը, Շուշին:

Դաս 3. Սյունիքի հայկական իշխանությունը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ է ընթացել Սյունիքի ազատագրական պայքարը:
2. Ովքե՞ր են ղեկավարել ազատագրական պայքարը:
3. Ի՞նչ կարևոր դեպքեր են տեղի ունեցել Սյունիքում 1722-1730 թթ :
4. Ո՞վ գլխավորեց Սյունիքի ազատագրական պայքարը Դավիթ Բեկի մահից հետո
5. Ինչպե՞ս ավարտվեց Սյունիքի ազատագրական պայքարը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Սյունիքում ազատագրական պայքարն ընթացել է 1722-1730 թթ :
2. Սյունիքի պայքարը ղեկավարել են Դավիթ-Բեկը, Մխիթար Սպարապետը, Տեր-Ավետիսը:
4. Սյունիքի պայքարը Դավիթ-Բեկի մահվանից հետո գլխավորեց Մխիթար Սպարապետը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել Սյունիքի ազատագրական պայքարի կարևոր իրադարձությունները. ջևանշիր ցեղի դեմ հաղթանակը, Տաթևի ազատագրումը, Չավնդուրի,Զնայի, Որոտանի, Հալիձորի և Մեղրիի ճակատամարտերը: (Թվարկել առնվազն 1-2 ը)
2. Գնահատել Տաթևի ազատագրումը և Հալիձորի ճակատամարտը:
3. Քարտեզի վրա ցույց տալ Սյունիքը:
4. Բացատրել, որ ազատագրական պայքարն ավարտվեց հայերի պարտությամբ, քանի որ Դավիթ Բեկի մահից հետո ազատագրական պայքարի գործիչները պառակտվեցին: Գործիչների մի մասը պահանջում էր շարունակել պայքարը, մյուս մասը՝ բանակցել թուրքերի հետ: Արդյունքում Հալիձորը հանձնվեց թուրքերին, իսկ Մխիթար սպարապետը սպանվեց, որից հետո պայքարը դադարեց:

Դաս 4. Զինված պայքարի արդյունքները և Պարսկաստանի նոր քաղաքականությունը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ արդյունք է ունեցել Արցախի և Սյունիքի զինված պայքարը:
2. Ե՞րբ և ո՞ւմ միջև է տեղի ունեցել Եղվարդի ճակատամարտը:
3. Որո՞նք էին Խամսայի մելիքությունները:
4. Ո՞ր հայ գործիչներն էին համագործակցում Նադիր շահի հետ:
5. Ի՞նչ դեր է խաղացել Գանձասարի կաթողիկոսությունը հայ ազատագրական շարժման պատմության մեջ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Եղվարդի ճակատամարտը տեղի է ունեցել. թուրքական և պարսկական զորքերի միջև, 1735 թվականին:
2. Նադիր շահի հետ համագործակցում էին նշանավոր գործիչներ Դիզակի մելիք Եգանը, Գեղարքունիքի մելիք Շահնազարը, Երևանի մելիք Հակոբջանը և ուրիշներ: (Թվարկել առնվազն 2 մելիքի անուն)

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Գնահատել, որ հայերի զինված պայարը բարձրացրեց հայ ժողովրդի իննագիտակցությունն ու ազատագրական ոգինմ հավատ ներշնչեց սեփական ուժերի հադեպ:
2. Թվարկել Խամսայի հինգ՝ Ջրաբերդի, Գյուլիստանի, Խաչենի, Վարանդայի, Դիզակի մելիքությունները: (Թվարկել առնվազն 2-3-ը)

3. Ցուց տալ, որ Գանձասարի կաթողիկոսությունը և հատկապես կաթողոկոս Եսայի Հասան-Ջալալյանը ոգեշնչում և կազմակերպում էին ազատագրական պայքարը:

Դաս 5. Ազատագրական պայքարը 18-րդ դարի երկրորդ կեսին

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վ էր Հովսեփ Էմինը, ի՞նչ կրթություն ուներ:
2. Ինչպե՞ս էր Էմինը պատկերացնում Հայաստանի ազատագրումը:
3. Ու՞մ հետ էր համագործակցում Էմինը Հայաստանի ազատագրումը կազմակերպելու համար:
4. Ո՞վ էր Մովսես Սարաֆյանը: Ինչպե՞ս էր պատկերացնում Սարաֆյանը Հայաստանի ազատագրումը:
5. Ովքե՞ր էին կազմել Հայաստանի ազատագրության Հյուսիսային ծրագիրը և որո՞նք էին Հյուսիսային ծրագրի հիմնական կետերը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հովսեփ Էմինը ազատագրական պայքարի կազմակերպիչներից մեկն էր, հնդկահայ գաղութի ներկայացուցիչ, Անգլիայում նա ստացել էր ռազմական կրթություն:
2. Էմինը համագործակցում էր Ռուսաստանի արքունիքի, Վրաստանի արքայի , Արցախի մելիքների և այլ շահագրգիռ գործիչների հետ:
3. Մովսես Սարաֆյանը ռուսահայ գործիչ էր, աստրախանցի մեծահարուստ, Հայաստանի ազատագրության ծրագրերի կազմողներից մեկը:
4. Հյուսիսային ծրագիրը կազմել էին ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանը և Հովհաննես Լազարյանը :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Հովսեփ Էինը Հայաստանի ազատագրումը կապում էր ազատագրական զինված պայքարի և այլ երկրների ռազմական օժանդակության հետ:
2. Բացատրել, որ Մովսես Սարաֆյանը Հայաստանի ազատագրումը տեսնում էր Ռուսաստանի և Վրաստանի ռազմական օգնությամբ ապստամբության միջոցով:
3. Ցույց տալ, որ ըստ Սարաֆյանի ծրագրի Հայաստանը պետք է Ռուսաստանի հովանու ներքո դառնար թագավորություն , Ռուսաստանի հետ պետք է ստեղծվեր ռազմական և առևտրական դաշինք, Հայաստանի մայրաքաղաք պիտի դառնար Անին կամ Վաղարշապատը: (Թվարկել առնվազն 2 կետ)

Դաս 6. Հնդկահայ ազատագրական կենտրոնը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ և ում կողմից է հիմնադրվել Մադրասի խմբակը:
2. Ինչպե՞ս էին տեսնում Հայաստանի ազատագրումը Շ. Շահամիրյանն ու մադրասահայ գործիչները:
3. Ի՞նչ աշխատություններ են տպագրվել Մադրասի տպարանում:
4. Ի՞նչ էր նախատեսվում Հայաստանի ազատագրության Հարավային ծրագրով:
5. Որ հոգևորական գործիչներն են 18-րդ դարի երկրորդ կեսին ներդրում ունեցել Հայաստանի ազատագրության գործում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Մադրասի խմբակը հիմնադրվել է 18-րդ դարի 70-ական թվականներին մեծահարուստ Շահամիրյանների կողմից, Հնդկաստանի Մադրաս քաղաքում:
2. Ըստ Շ. Շահամիրյանի ու մադրասահայ գործիչների Հայաստանը պետք է ազատագրվեր համաժողովրդական ախստամբության միջոցով:
3. Մադրասի տպարանում հրատարակվել են «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» հրապարակախոսական աշխատությունը և «Որոգայթ փառաց» օրենքների ժողովածուն:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Առանձնացնել Շահամիր Շահամիրյանի հեղինակած Հայաստանի ազատագրության Հարավային ծրագրի կետերը, ընտրողաբար նշելով, որ նախատեսում էր ստեղծել խորհրդարանական հանրապետություն, Կառավարությունը գլխավորելու էր ազգությամբ հայ նախարարը, Հայաստանում 20 տարի ժամկետով տեղակայվելու էր ռուսական 6000-ոց զորք, Ռուսաստանի և Հայաստանի միջև սահմանվելու էր ազատ երթևեկություն, Ռուսաստանում Հայաստանն ունենալու էր իր դեսպանը: (Թվարկել առնվազը 2 կետ)
2. Ժամանակագրական հաջորդականությամբ թվարկել, 18-րդ դարում Հայաստանի ազատագրության գործում մեծ ավանդ ունեցած Աստվածատուր Համադանցի, Աբրահամ Կրետացի, Սիմեոն Երևանցի կաթողիկոսների անունները: (Թվարկել առնվազը 2 անուն)

Գլուխ 2

Հայոց պետականության վերականգնման խնդիրը 19-րդ դարի առաջին կեսին

Դաս 1-2. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր երկրների տիրապետության տակ էր գտնվում Հայաստանը 19-րդ դարի սկզբում:
2. Ե՞րբ են տեղի ունեցել ռուս-պարսկական առաջին և ռուս-պարսկական երկրորդ պատերազմները և ո՞ր պայմանագրերով են ավարտվել:
3. Հայերն ինչու՞ էին մասնակցում պատերազմներին :
4. Ո՞րն էր երկրորդ ռուս-պարսկական պատերազմի ամենանշանավոր ռազմական գործողությունը :
5. Գեղարվեստական գրականության մեջ ի՞նչ արտացոլում ունի Երևանի բերդի գրավումը:
6. Ի՞նչ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 19-րդ դարի սկզբին Հայաստանը շարունակում էր բաժանված մնալ Օսմանյան տերության և Պարսկաստանի միջև:
2. Առաջին ռուս-պարսկական պատերազմը տեղի է ունեցել 1804-1813 թթ., իսկ երկրորդ ռուս-պարսկական պատերազմը՝ 1826-1828 թթ.:
3. Երկրորդ պատերազմի ամենակարևոր ռազմական գործողությունը Երևանի բերդի գրավումն էր՝ 1827 թ հոկտեմբերի 1-ին :
4. Երևանի բերդի գրավումը նկարագրված է Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Ըստ ժամանակագրության թվարկել պայմանագրերը: Առաջին ռուս-պարսկական պատերազմը ավարտվել է Գյուլիստանի պայմանագրով, երկրորդ ռուս-պարսկական պատերազմը՝ Թուրքմենչայի պայմանագրով:

2. Հիմնավորել, որ հայերն մասնակցում էին պատերազմներին, քանի որ հայ ժողովրդի ազատագրման հույսերը համընկնում էին Այսրկովկասը գրավելու ցարական նպատակների հետ, հայերը պատերազմում ռուսներին օգնում էին՝ հույս ունենալով ազատագրվել պարսկական լծից :
3. Դիրքորոշում հայտնել Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացման վերաբերյալ:

Դաս 3. Արևմտյան Հայաստանը 19-րդ դարի սկզբներին և ռուս-թուրքական պատերազմները

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ինչպիսի՞ն էր արևմտահայության վիճակը 19-րդ դարասկզբին:
2. Ի՞նչ իշխանություններ կային Արևմտյան Հայաստանում:
3. Ե՞րբ է տեղի ունեցել 19-րդ դարի ռուս-թուրքական առաջին և երկրորդ պատերազմները: Ո՞ր պայմանագրերով են ավարտվել պատերազմները:
4. Ի՞նչ կարևոր ճակատամարտեր կարող եք նշել 19-րդ դարի ռուս-թուրքական առաջին և երկրորդ պատերազմից:
5. Ի՞նչ մասնակցություն ունեցան հայերը ռուս-թուրքական պատերազմներում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. Արևմտահայությունը թուրքական տիրապետության տակ ենթարկվում էր ազգային և կրոնական հալածանքների:
2. Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի սկզբին գոյություն ունեին Սասունի, Մոկսի և Զեյթունի կիսանկախ իշխանությունները: (Թվարկել առնվազը 2 ը)
3. Առաջին ռուս- թուրքական պատերազմը տեղի է ունեցել 1806-1812 թթ., իսկ երկրորդ ռուս-թուրքական պատերազմը՝ 1828-1829թթ.:
4. 19-րդ դարի ռուս-թուրքական առաջին և երկրորդ պատերազմների հետևյալ կարևոր ճակատամարտերից առնվազը մեկ երկուսը (1807թ. Փոքր Ղարաքիլիսայի ճակատամարտը, 1828 թ. Կարսի ճակատամարտը, Ախալքալաքի ճակատամարտը, Ախլցխայի ճակատամարտը, 1829 թ. Բայազետի ճակատամարտy, Էրզրումի ճակատամարտը):
5. Հայերը պատերազմներին մասնակցում էին կամավորական ջոկատներով, ինչպես նաև նյութական և այլ միջոցներով:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

Ըստ ժամանակագրության թվարկել պայմանագրերը: Առաջին ռուս-թուրքական պատերազմը ավարտվել է Բուխարեստի պայմանագրով, երկրորդ ռուս-թուրքական պատերազմը՝ Ադրիանապոլսի պայմանագրով:

1. Համապատասխանեցնել 19-րդ դարի առաջին և երկրորդ ռուս-թուրքական պատերազմները և պայմանագրերը:

Պատերազմ		Պայմանագիր	
1	1806-1812 թթ.	1	Թուրքմենչայի պայմանագիր
2	1826-1828 թթ.	2	Ադրիանապոլսի պայմանագիր
3	1804-1813 թթ.	3	Գյուլիստանի պայմանագիր
4	1828-1829 թթ.	4	Բուխարեստի պայմանագիր

2. Բացատրել ռուս-թուրքական պատերազմներին հայերի մասնակցության շարժառիթները:

Դաս 4. Հայաստանը 19-րդ դարի 30-40-ական թթ.

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ովքե՞ր կազմեցին Հայաստանի ազատագրության ծրագրեր:

2. Ե՞րբ և ո՞ր խանությունների հիման վրա ստեղծվեց Հայկական մարզը:
3. 1830թ. որտե՞ղ և որքա՞ն արևմտահայեր վերաբնակեցվեցին:
4. Ի՞նչ է Պոլոժենիե-ն:
5. Ի՞նչ է Թանզիմաթը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայաստանի ազատագրության ծրագրեր են կազմել Ալ. Խուդաբաշյանը, Խ. Լազարյանը, Կ. Արղությանը: (Թվարկել առնվազը 2 անուն)
2. 1828թ-ի մարտի 21-ին Երևանի և Նախիջևանի խանությունների հիման վրա ձևավորվեց Հայկական մարզը:
3. 1830 թ. 75000 արևմտահայեր վերաբնակեցվեցին Ախալքալաքի, Ախլցխայի, Կարսի, Շիրակի շրջաններում և Սևանի ավազանում: (Թվարկել առնվազը 2 տեղավայրի անուն):
4. Պոլոժենիե-ն 1836 թ. ընդունված կանոնադրություն է, որով կարգավորվում էին ցարական իշխանության և հայոց եկեղեցու փոխհարաբերությունները:
5. Թանզիմաթը 1839 թ. սուլթանի կողմից ընդունված բարենորոգումների հրովարտակն է:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Քարտեզի վրա ցույց տալ Հայկական մարզի սահմանները:
2. Հիմնավորել արևմտահայության վերաբնակեցման նշանակությունը:

Բաժին 2

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ և 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

Գլուխ 1

Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը

Դաս 1. Արևելյան Հայաստանի տնտեսական ու սոցիալական կյանքը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ Ռուսական կայսրությունում տեղի ունեցավ արդյունաբերական հեղաշրջումը:
2. Որտե՞ղ էր կենտրոնացած պղնձի արտադրությունը:
3. Ի՞նչ մակնիշով էր հայտնի Շուստովի գործարանի կոնյակը:
4. Արդյունաբերական ո՞ր ճյուղերն էին զարգացած Արևելյան Հայաստանում :
5. Ինչի՞ շնորհիվ արագացավ գյուղատնտեսության զարգացումը:
6. 1910 թ. տվյալներով բնակչության թվաքանակով որո՞նք էին ամենամեծ քաղաքները:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Ռուսական կայսրությունում 1860-1870-ական թթ. տեղի ունեցավ արդյունաբերական հեղաշրջումը:
2. Պղնձի արդյունաբերությունը զարգացած էր Ալավերդիում և Կապանում:
3. Շուստովի գործարանի «Արարատ» մակնիշով կոնյակը մեծ պահանջարկ էր վայելում:

4. Արևելյան Հայաստանում զարգացած էին պղնձի, շինաքարի, խմիչքի արտադրությունը, մանածագործությունն ու ոսկերչությունը:
5. 1910 թ. տվյալներով բնակչության թվաքանակով ամենամեծ քաղաքները Շուշին Ալեքսանդրապոլը, Կարսն ու Երևանն էին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Քարտեզի վրա ցույց տալ Ալավերդի, Շուշի, Ալեքսանդրապոլ, Կարս և Կապան քաղաքները: (Ցույց տալ առնվազը երկու քաղաք)
2. Բացատրել, էր գյուղատնտեսության զարգացումն արագացավ ստոլիպինյան վերափոխումների շնորհիվ, որի արդյունքում հայկական գյուղը մուտք գործեց շուկայական հարաբերությունների ոլորտ:
3. Կարողանա համապատասխանեցնել բնակչության քանակը քաղաքների անվանումներին:

	Քաղաք		Բնակչություն
1	Շուշի	1	35000
2	Երևան	2	32000
3	Կարս	3	42000
4	Ալեքսանդրապոլ	4	30000

Դաս 2. Ռուսաստանի գաղութային քաղաքականությունը և արևելահայերի ազգային և սոցիալական շարժումները

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ինչու՞ փակվեցին հայկական դպրոցները:
2. Հայ ժողովուրդն ինչպե՞ս արձագանքեց ազգային դպրոցները փակելու որոշմանը:
3. Որտե՞ղ բռնկվեցին գյուղացիական ելույթներ Արևելյան Հայաստանում և Այսրկովկասում:
4. Ե՞րբ և ու՞մ գլխավորությամբ է ստեղծվել մարքսիստական առաջին խմբակը Արևելյան Հայաստանում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայկական դպրոցները փակելու որոշման դեմ բարձրացավ համաժողովրդավարական բողոքի ալիք:
2. Գյուղացիական ելույթներ տեղի ունեցան Թիֆլիս-Կարս, Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղիների շրջանում, Էջմիածնի, Նոր Բայազետի և Զանգեզուրի գավառներում: (Նշել առնվազը երկու բնակավայրի անվանում)
3. 1899 թ. Ջալալօղլիում Ստ. Շահումյանի գլխավորությամբ ստեղծվել է մարքսիստական առաջին խմբակը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Հիմնավորել, որ ցարական կառավարությունը հայկական դպրոցները փակում էր հայերին ձուլելու և ազգային դպրոցը վերացնելու նպատակով:

Դաս 3.-Արևմտահայերի տնտեսական և սոցիալական դրությունը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

Քանի՞ նահանգների էր բաժանված Արևմտյան Հայաստանը:

1. Ինչու՞ էր Օսմանյան պետությունը ճնշում գործադրում հայերի նկատմամբ:
2. Հողատիրության ի՞նչ ձևեր կային Օսմանյան կայսրությունում:
3. Արդյունաբերական որ՞ ճյուղերն էին զարգանում Արևմտյան Հայաստանում:
4. Որո՞նք էին բնակչության թվաքանակով ամենամեծ քաղաքները:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Արևմտյան Հայաստանը բաժանված էր 6 նահանգների՝ Էրզրումի,Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի Խարբերդի, Սեբաստիայի: (Նշել առնվազը երկու նահանգի անվանում))
2. Արևմտյան Հայաստանում զարգանում էր օղու, ծխախոտի, գինու, լուցկու արտադրությունը: (Թվարկել առնվազն արտադրության երկու ճյուղի անուն)
3. 1893 թ. տվյալներով բնակչության թվաքանակով ամենամեծ քաղաքները Կարինը, Վանը և Բիթլիսն էին

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Քարտեզի վրա ցույց տալ առնվազը երկու նահանգ:
2. Թվարկել Օսմանյան կայսրությունում հողատիրության երեք՝ պետական, մասնատիրական և վակուֆային ձևերը:
3. Կարողանա համապատասխանեցնել բնակչության քանակը քաղաքների անվանումներին:

	աղաք		ակչություն
	ան		000
	արին		000

4. Համեմատել արևմտահայերի և արևելահայերի կյանքը, նշել, որ ի տարբերություն արևելահայերի, որոնք ունեին կյանքի և ունեցվածքի ապահովություն, արևմտահայերն ապրում էին իրավազուրկ ու անապահով պայմաններում, ենթարկվում էին ազգային խտրականության և հալածանքների, իսկ դարավերջին ենթարկվեցին ցեղասպանության:

Գլուխ 2

Հայկական հարցի միջազգայնացումը

Դաս 1. Արևելյան հարցի սրումը: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայերը:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է Արևելյան հարցի էությունը և ե՞րբ այն սրվեց:
2. Ե՞րբ է սկսվել Ղրիմի պատերազմը և ո՞ւմ միջև էր ընթանում:
3. Երբ է տեղի ունեցել 19-րդ դարի IV ռուս-թուրքական պատերազմը և ո՞ւմ հաղթանակով է ավարտվել:
4. Նշել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում մեծ դերակատարում ունեցած հայ նշանավոր ռազմական գործիչների անուններ:
5. Ի՞նչ կարևոր ճակատամարտեր են տեղի ունեցել Կովկասյան ճակատում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Արևելյան հարցը սրվել է 19-րդ դարի կեսերին:

2. Ղրիմի կամ Արևելյան պատերազմը սկսվել է 1853 թ., այն ընթանում էր Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև:
3. Ռուս-թուրքական չորրորդ պատերազմը տևել է 1877-1878 թթ.:
4. Թվարկել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում մեծ դերակատարում ունեցած հետևյալ հայ նշանավոր ռազմական գործիչների անունները. Միխայիլ Լոռիս Մելիքով , Ա. Տեր-Ղուկասով , Սամսոն Տեր Պողոսյան, գեներալներ Ալխազով Մելքումով : (Նշել առնվազն երկու գործչի անուն)
5. 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը ավարտվել է Ռուսաստանի հաղթանակով:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ եվրոպական մեծ տերությունների՝ Օսմանյան կայսրությունում ազդեցություն տարածելու համար սկսված պայքարը ստացել է Արևելյան հարց անվանումը:
2. Ժամանակագրական հաջորդականությամբ թվարկել 1877-1878 թթ. պատերազմի կարևոր իրադարձությունները՝ Բայազետի 1877 թ. , Արդահանի 1877թ. , Կարսի 1877 թ., Էրզրումի 1878 թ. ճակատամարտերը : (Թվարկել առնվազն երկու ճակատամարտ)

Դաս 2. Հայկական հարցի միջազգայնացումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1.Ե՞րբ է կնքվել Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը և ե՞րբ է հրավիրվել Բեռլինի վեհաժողովը:
2.Սան Ստեֆանոյի պայմանագրի և Բեռլինի վեհաժողովի ո՞ր հոդվածներն էին վերաբերվում Հայաստանին և հայերին:
3. Ո՞վ է Մկրտիչ Խրիմյանը: Ո՞րն է Երկաթե շերեփի գաղափարը: 4. Ի՞նչ բովանդակություն ուներ Հայկական հարցը 19-րդ դարի վերջին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Սան Ստեֆանոյի պայմանագիրը կնքվել է 1878 թ. փետրվարի 19-ին: 2. Բեռլինի վեհաժողովը տեղի է ունեցել 1878թ.հունիսի 1-հուլիսի 1-ը:
3. Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ, 25-րդ, 27-րդ 7 Բեռլինի վեհաժողովի 61 րդ հոդվածները վերաբերվում էին Հայաստանին և հայերին:
4.Բեռլինի վեհաժողով մեկնած պատվիրակությունը ղեկավարում էր Կ. Պոլսի հայոց պատրիարք Մկրտիչ Խրիմյանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Մեկնաբանել «Երկաթի շերեփի» գաղափարը՝որպես զինված պայքարի անհրաժեշտություն:
2. Բնութագրել Մկրտիչ Խրիմյանին որպես ազգանվեր գործիչ :
3. ՀամեմատելՍան Ստեֆանոյի 16 րդ և Բեռլինի վեհաժողովի 61րդ հոդվածները:
4. Բացատրել, որ 19-րդ դարի վերջին Հայկական հարց ասելով հասկանում էին Ռուսաստանի կողմից գրավված և Թուրքիային վերադարձված հայաբնակ վիլայեթներում բարենորոգումների իրականացումը:

Գլուխ 3
Հայ քաղաքական կյանքի վերելքը

Դաս 1. Հասարակական-քաղաքական հոսանքները

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Թվարկեք ազգային հասարակական հոսանքները:
2. Ովքե՞ր էին հայ նշանավոր պահպանողականները, որո՞նք են նրանց հիմնական գաղափարները:
3. Ովքե՞ր էին հայ նշանավոր ազատականները, որո՞նք են նրանց հիմնական գաղափարները:
4. Ովքե՞ր էին հայ նշանավոր ազգայնական սոցիալիստները, որո՞նք են նրանց հիմնական գաղափարները:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 19-րդ դարի 50-70-ական թթ. առավել հայտնի ուղղություններն էին պահպանողական ու ազատական հոսանքները:
2. Հայ նշանավոր պահպանողականներից էին Գաբրիել վարդապետ Այվազովսկին, Մարկոս Աղաբեկյանը, Ծերենցը և այլոք: Նրանք կողմնակից էին ավանդական արժեհամակարգին, միապետական համակարգի վերականգնմանը, Հայոց եկեղեցու և հայ նահապետական ընտանիքի, հայոց լեզվի անաղարտության պահպանությանը: Ցանկանում էին եկեղեցու և դպրոցի միջոցով ազգի համար կրթված սերունդ պատրաստել: (Նշել առնվազն մեկ երկու գործչի անուն և հոսանքին բնորոշ մեկ երկու գաղափար)
3. Հայ նշանավոր ազատականներից էին Ստեփան Նազարյանցը, Գրիգոր Օտյանը, Գրիգոր Արծրունի, Հարություն Սվաճյանը, Հակոբ Պարոնյանը և այլոք: Նրանք պահանջում էին եկեղեցու և նահապետական բարքերի ազատականացում: Գտնում էին, որ պետք է հրաժարվել գրաբարից և անցնել աշխարհաբարի: (Նշել առնվազն մեկ երկու գործչի անուն և և հոսանքին բնորոշմեկ երկու գաղափար)
4. Հայ նշանավոր ազգայնական սոցիալիստներից էին Միքայել Նալբանդյանը, Ռաֆֆին և ուրիշները: Կողմ էին ազգային արժեքները եվրոպականին համահունչ դարձնելուն, ապստամբության միջոցով սոցիալիստական հասարակություն կառուցելուն: (Նշել առնվազն մեկ երկու գործչի անուն և և հոսանքին բնորոշ մեկ երկու գաղափար)

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

Համապատասխանեցնել գործիչներին և հոսանքները:

	Գործիչ		Հոսանք
1	Միքայել Նալբանդյան	1	պահպանողական
2	Հակոբ Պարոնյան	2	ազատական
3	Գաբրիել վարդապետ Այվազովսկի	3	ազգայնական սոցիալիստ

1. Համեմատել հոսանքները, յուրաքանչյուրի համար նշելով մեկ երկու գաղափար:

Դաս 2. Ազգային հասարակական շարժումները:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ է ընդունվել «Ազգային սահմանադրությունը» և ե՞րբ է վավերացվել սուլթանի կողմից:
2. Որտե՞ղ էր գտնվում Զեյթունը, ինչո՞վ էր այն աչքի ընկնում:
3. Ե՞րբ և ի՞նչ իրադարձությամբ է սկսվել Զեյթունի ապստամբությունը:
4. Ո՞վ էր գլխավորում Զեյթունի ապստամբությունը և ինչո՞վ ավարտվեց:
5. Ի՞նչ նշանակություն ունեցավ Զեյթունի ապստամբությունը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1860 թ. մայիսին Կոստանդնուպոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատեց Ն.Ռուսինյանի առաջարկած «Ազգային սահմանադրությունը», որը 1863 թ. մարտին» վավերացվեց սուլթանի կողմից։
2. Զեյթունը գտնվում է Կիլիկիայում: Այն ձևականորեն էր ընդունում թուրքական տիրապետությունը:
3. 1862 թ. ամռանը Զեյթունի հայերի և չերքեզների միջև սկսվում է հողային վեճ, որը առիթ է դառնում, որ թուրքական 12000-անոց զորքը հարձակվի Զեյթունի վրա։
4. Զեյթունի ինքնապաշտպանությունը գլխավորում էր Պապիկ Նորաշխարհյանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Արժևորել, որ Զեյթունի ապստամբության արդյունքում Զեյթունը մնաց կիսաանկախ և Մարաշի փաշան Պապիկ իշխանին ճանաճեց Զեյթունի քաղաքագլուխ:
2. Գնահատել այն հանգամանքը, որ 1862 թ. Զեյթունի ապստամբությունը մեծ ազդեցություն ունեցավ հայ ազատագրական շարժման հետագա ընթացքի համար և բարձրացրեց ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը:

Դաս 3. Պայքարի նոր գաղափարախոսություն։ Ազատագրական կազմակերպությունները։

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վ է զինված պայքարի գաղափարախոսության հիմնադիրը:
2. Թվարկեք խմբակներն ու կազմակերպությունները, ե՞րբ և որտե՞ղ են դրանք ստեղծվել:
3. Ո՞ր խմբակն է մեծ հեղինակություն ունեցել Կարինում։
4. Ի՞նչ նպատակով էին ստեղծվում խմբակներն ու կազմակերպությունները:
5. Ի՞նչպես էին վերաբերվում Օսմանյան Թուրքիան և Ցարական Ռուսաստանը խմբակներին և կազմակերպություններին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

Զինված պայքարի գաղափարախոսության հիմնադիրը Խրիմյան Հայրիկն է։

1. Թվարկել արևելահայ և արևմտահայ առնվազը մեկ խմբակի ստեղծման վայր և անվանում:

1869 թ. Ալեքսանդրապոլում ստեղծվում է «Բարենպատակ ընկերություն»-ը:

1874թ. Մեծ Ղարաքիլիսայում ստեղծվում է «Հայրենիքի սիրո գրասենյակ»-ը։ 1872թ. Վանում՝ «Միություն ի փրկություն», 1878-1879թ. Վանում՝ «Սև խաչ», «Զինակիր» կազմակերպությունները։ 1881թ. Կարինում ստեղծվում է «Պաշտպան հայրենյաց»-ը։

2. Կարինում առավել ակտիվ գործունեություն էր ծավալում «Պաշտպան հայրենյաց»-կազմակերպությունը:

3. Օսմանյան Թուրքիան և Ցարական Ռուսաստանը բացասաբար էին վերաբերվում խմբակներին և կազմակերպություններին, հայտնաբերելու դեպքում դադարեցնում էին նրանց գործունեությունը, ձերբակալում, աքսորում էին անդամներին, շատերին դատապարտում մահվան։

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

Բացատրել, որ խմբակներն ու կազմակերպությունները ստեղծվում էին ժողովրդին զինելու, Հայաստանն ազատագրելու, Արևմտյան և Արևելյան Հայաստանում գործող խմբերի միջև կապ ստեղծելու նպատակով:

Դաս 4. Հայ ազգային կուսակցությունները:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Թվարկե՛ք հայ ազգային կուսակցությունները,
2. Ո՞ր թվականին և որտե՞ղ են դրանք ստեղծվել:
3. Թվարկե՛ք կուսակցությունների նշանավոր գործիչներին:
4. Ո՞րն էր կուսակցությունների հիմնական նպատակը:
5. Ինչպե՞ս էին կոչվում կուսակցությունների պաշտոնաթերթերը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Կուսակցությունների անվանումները՝ Արմենական կուսակցություն, Հնչակյան կուսակցություն, ՝ Հայ հեղափոխականների դաշնակցություն, որը որոշ ժամանակ հետո վերանվանվեց Հայ հեղափոխական դաշնակցություն:
2. Թվարկել կուսակցությունների հիմնադիր գործիչների անունները: (Նշել յուրաքանչյուր կուսակցությունից առնվազը մեկ գործչի անուն)
3. Հնչակյան կուսակցությունը հրատարակում էր «Հնչակ» թերթը, իսկ Հայ հեղափոխական դաշնակցությունը՝ «Դրոշակ» թերթը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Ըստ ստեղծման հաջորդականության, տարեթվերով թվարկել կուսակցությունները: 1885 թ.-ին Վանում ստեղծվում է Արմենական կուսակցությունը: 1887 թ. Ժնևում ստեղծվում է Հնչակյան կուսակցությունը, 1890 թ. Թիֆլիսում՝ Հայ հեղափոխականների դաշնակցությունը, որը որոշ ժամանակ հետո վերանվանվեց Հայ հեղափոխական դաշնակցություն
2. Բացատրել, որ կուսակցությունների ստեղծման հիմնական նպատակը Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր:
3. Համապատասխանեցնել
4.

ուսակցություն		մնադիր/նշանավոր գործիչներ		այր	
	ամենական		Ավետիսյան		ան
	չակյան		լ. Նազարբեկյան		ն
	Դ		. Միքայելյան, Ս. Զավարյան, Ռոստոմ		ֆլիս

5. Դիրքորոշում հայտնել նշված կուսակցություններից առնվազը մեկի վերաբերյալ:

Գլուխ 4

Ազատագրական պայքարի զինված փուլը

Դաս 1. Ազատագրական պայքարի վերելքը: Հայդուկային շարժում:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ովքե՞ր են հայդուկները: Ի՞նչ է նշանակում «հայդուկ», «ֆիդայի»:
2. Ինչպե՞ս էին գործում հայդուկները:
3. Թվարկեք նշանավոր հայդուկներին:

4. Ե՞րբ և ինչու՞ վերելք ապրեց հայդուկային շարժումը:
5. Ի՞նչ նշանակություն է ունեցել հայդուկային շարժումը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. Հայդուկները համաժողովրդական վրիժառուներ են:
2. Հայդուկները գործում էին հիմնականում Արևմտյան Հայաստանի տարածքում, միայնակ կամ փոքր խմբերով և իրականացնում էին պատժիչ և ինքնապաշտպանական գործողություններ թուրք և քուրդ հրոսակների դեմ:
3. Հայ նշանավոր հայդուկներին. Արաբո (առաքել Մխիթարյան), Աղբյուր Սերոբ (Սերոբ Վարդանյան), Մեծն Մուրադ, Գևորգ Չավուշ, Հրայր Դժոխք, Անդրանիկ: (Թվարկել առնվազն 2-3 հայդուկապետի անուն)
4. 19-րդ դարի վերջին հայդուկային շարժումը մեծ դեր ունեցավ հայկական կոտորածների ժամանակ ինքնապաշտպանությունը կազմակերպելու և ղեկավարելու գործում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

1. Բացատրել, որ Հայդուկ հունգարերեն նշանակում է հետևակ, ֆիդայի, արաբերեն՝ զոհ, ինքնազոհ:
2. Բացատրել, որ 1880-ական թթ. Արևմտյան Հայաստանում հայդուկային շարժումը վերելք ապրեց՝ պայմանավորված Աբդուլ Համիդ 2-րդի հայերի ոչնչացման քաղաքականությամբ:
3. Հայտնել դիրքորոշում հայդուկային շարժման վերաբերյալ:
4. Արժևորել հայդուկային շարժման ազգանպաստ և դաստիարակչական նշանակությունը 19-րդ դարի վերջին և նաև մեր օրերում:

Դաս 2. Արևմտահայերի ցեղասպանության թուրքական ծրագրի իրագործման սկիզբը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. 1. Ե՞րբ, ու՞մ կողմից և ի՞նչ նպատակով ստեղծվեցին Համիդիե գնդերը:
2. Հայկական հարցի վրա մեծ տերությունների ուշադրությունը հրավիրելու համար ի՞նչ իրադարձություններ են տեղի ունեցել 1890-1895 թթ.:
3. Ե՞րբ սկսեցին իրականացվել հայերի զանգվածային կոտորածները:
4. Ի՞նչ գաղափարախոսություններ են պանթյուրքիզմն ու պանիսլամիզմը: Ի՞նչ է ցեղասպանությունը:
5. Որքա՞ն է կազմում 1894-1896 թթ. կոտորածների հետևանքով սպանվածների և արտագաղթածների թիվը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1891 թ. Աբդուլ Համիդի 2-րդի հրամանով ստեղծվում են քրդերից կազմված գնդեր, որոնք սուլթանի անունով կոչվեցին Համիդիե:
2. 1890 թ. հուլիսին Կ.Պոլսի Գում Գափու թաղամասում կազմակերպվեց խաղաղ ցույց: 1895 թ. սեպտեմբերի 18-ին Կ.Պոլսում հնչակյանները կազմակերպեցին 4000-անոց խաղաղ ցույց և շարժվեցին Բաբը Ալի (Կառավարության նստավայր) սուլթանին հանձնելու բարենորոգումների Մայիսյան նախագիծը: (Նշել առնվազն մեկ իրադարձությունը)
3. Օսմանյան իշխանությունների կողմից 1894-1896 թթ. Իրականացվեցին հայերի զանգվածային կոտորածներ:

4. 1894-1896 թթ. Օսմանյան Թուրքիայի տարածքում ոչնչացվեց մոտ 300.000 հայ, մոտ 100.000 հայ արտագաղթեց Ռուսաստան, 200.000-ը՝ Եվրոպա և Ամերիկա։

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Համիդիե գնդերի ստեղծման հիմնական նպատակը քրդերին հետ էր պահում հակակառավարական գործողություններից և նրանց ուղղորդում էր հայերի դեմ:
2. Բացատրել պանթյուրքիզմ, պանիսլամիզմ և ցեղասպանություն հասկացությունները.

   - պանիսլամիզմը (համաիսլամականություն) նպատակ ուներ միավորել իսլամադավան բոլոր ազգերին,
   - պանթյուրքիզմը (համաթյուրքականություն) նպատակ ուներ թյուրքալեզու բոլոր ժողովուրդներին միավորել Օսմանյան Թուրքիայի շուրջը,
   - ցեղասպանությունը (գենոցիդ՝ հունարեն գենոս- ցեղ, լատիներեն՝ սիդո-սպանել) մեկ ազգի կամ կրոնական համայնքի ամբողջական կամ մասնակի բնաջնջմանը նպատակաուղղված պետական մակարդակի ծրագիր և գործողություն է։

Դաս 3. Ազատագրական պայքարը 1894-1896 թթ.: Հայկական հարցը և տերությունները:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր վայրերում և ե՞րբ տեղի ունեցան ինքնապաշտպանական հերոսամարտեր, ովքե՞ր էին դրանց ղեկավարները։
2. Ե՞րբ և ի՞նչ պայմաններում ընդունվեց Մայիսյան բարենորոգումների ծրագիրը։
3. Ի՞նչ հետևանք ունեցան 1894-1896 թթ. ինքնապաշտպանական մարտերը։
4. Ե՞րբ և ինչու՞ կազմակերպվեց Խանասորի արշավանքը:
5. Ի՞նչ վերաբերմունք ցուցաբերեցին եվրոպական երկրները 1890-ական թթ. հայկական կոտորածների նկատմամբ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1894 թ. Սասունի ապստամբության ղեկավարը Մեծն Մուրադն էր։ Զեյթունի 1895-1896 թթ. ապստամբության փաստական ղեկավարը Նազարեթ Չավուշն էր։ Վանի 1896 թ. հերոսամարտը ղեկավարում էր Մկրտիչ Ավետիսյանը:
2. 1895 թ. մայիսի 11-ին Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը սուլթանին հանձնեցին Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, որով հայկական 6 նահանգներում անցկացվելու էին բարենորոգումներ։
3. 1897թ., ի պատասխան 1896թ. նահանջող վանեցիների կոտորածի, հայդուկները կազմակերպեցին Խանասորի արշավանքը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Համապատասխանեցնել ինքնապաշտպանական մարտերի վայրերը, տարեթվերը և ղեկավարներին:

	Տեղավայր		Տարեթիվ		ղեկավար
1	Զեյթուն	1	1896 թ.	1	Մեծն Մուրադ
2	Սասուն	2	1895-1896 թթ.	2	Մկրտիչ Ավետիսյան

3	Վան	3	1894 թ.	3	Նազարեթ Չավուշ

2. Գնահատել ինքնապաշտպանական մարտերի կարևոր նշանակությունը, ցույց տալ, որ 1894-1896 թթ. ինքնապաշտպանական մարտերի շնորհիվ հնարավոր եղավ խուսափել զանգվածային ջարդերից, ստիպել մեծ տերություններին մասամբ կասեցնելու կոտորածները, նորից բարձրացավ հայկական բարենորոգումների խնդիրը:
3. Բացատրել, որ հայդուկները՝ ի պատասխան 1896թ. նահանջող վանեցիների կոտորածի, կազմակերպեցին Խանասորի արշավանքը:

4. Հիմնավորել, որ եվրոպական երկրների չմիջամտելու քաղաքականությունը պայմանավորված էր Թուրքիայից նրանց ունեցած ակնկալիքներով:

Գլուխ 5

Հայ ազատագրական շարժումները 20-րդ դարի սկզբին

Դաս 1. ***Պայքար ցարիզմի հակահայ քաղաքականության դեմ***

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ է ընդունվել Հայոց եկեղեցու գույքի բռնագրավման մասին ցարական օրենքը և ու՞մ դեմ էր այն ուղղված:
2. 1903 թ. ո՞վ էր Ամենայն հայոց կաթողիկոսը :
3. Ե՞րբ և ինչու՞ վերադարձվեց հայոց եկեղեցու գույքը :
4. Ցարի ցուցումով ո՞վ և ինչու՞ հրահրեց հայ-թաթարական բախումներ:
5. Թաթարների դեմ հայ ժողովրդի ինքնապաշտպանական մարտերը ովքե՞ր էին ղեկավարում:
6. Ի՞նչ արդյունք տվեցին ինքնապաշտպանական մարտերը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Նիկոլայ 2-րդի կողմից Հայոց եկեղեցու անշարժ և շարժական գույքի բռնագրավման մասին օրենքն ընդունվել է 1903թ հունիսի 12-ին:
2. 1903 թ. դեպքերի ժամանակ Ամենայն Հայոց կաթողիկոսն էր Մկրտիչ Խրիմյանը՝ Հայրիկը:
3. 1905 թ. ցարական իշխանությունները վերադարձրին Հայոց եկեղեցու գույքը և չեղյալ հայտարարեցին օրենքը:
4. Ցար Նիկոլայ 2-րդի ցուցումով Բաքվի նահանգապետ Նակաշիձեն հրահրեց հայ-թաթարական ազգամիջյան բախումներ:
5. Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ ժողովրդի պաշտպանությունն ու պայքարը ղեկավարում էին նշանավոր հայդուկներ Նիկոլ Դումանը, Վարդանը, Արմեն Գարոն, Փարամազը և ուրիշներ : (Թվարկել առնվազն 2 գործչի անուն)

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Դուրս բերել գույքի բռնագրավման օրենքի հիմնական նպատակը, բացատրել, որ 1903 թ. հունիսի 12-ի օրենքն ուղղված էր հայոց եկեղեցու և եկեղեցու միջոցների հաշվին գոյատևող հայկական դպրոցների դեմ:
2. Մեկնաբանել, որ 1905 թ. ցարական իշխանությունները վերադարձրին Հայոց եկեղեցու գույքը և չեղյալ հայտարարեցին օրենքը՝ տեսնելով ժողովրդի գործուն պայքարն ու նոր քաղաքական իրավիճակը:
3. Բացատրել, որ հայ-թաթարական ազգամիջյան բախումները հրահրվեցին Ժողովրդի ուշադրությունը հեղափոխական պայքարից շեղելու նպատակով:
4. Բացատրել եկեղեցու գույքը վերադարձնելու 1-2 պատճառ՝ 1905թ. սկսված հեղափոխությունը, ժողովրդական հուզումները:

5. Գնահատել 1905-1906 թթ արևմտահայության և արևելահայության միասնական պայքարը՝ նշելով, որ հայ ժողովուրդը կարողացավ համախմբվել ու հակահարված տալ թաթար ավազակախմբերին, բարձրացավ ազգային ինքնագիտակցությունը:

Դաս 2. Արևելյան Հայաստանը 1907-1914 թթ.

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ է Ռուսաստանում հրավիրվել երկրորդ Պետական դուման և ի՞նչ հետևանք ունեցավ դրա ցրումը:
2. Ե՞րբ է տեղի ունեցել«Դաշնակցության գործ» կոչվող դատավարությունը:
3. Ո՞ր հայտնի գործիչներին էին մեղադրում Դաշնակցության գործի շրջանակներում:
4. Արևլյան Հայաստանում Առաջին աշխարհամարտի նախօրեին ինչպիսի՞ իրավիճակ էր տիրում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Ռուսաստանում Երկրորդ Պետական դուման հրավիրվել է 1907 թ. և կարճ ժամանակ անց ցրվել:
2. 1908 թ. հարուցված կեղծ մեղադրանքների հիման վրա 1912 թ. հունվար-մարտ ամիսներին ընթացավ Դաշնակցության գործ կոչված դատավարությունը :
3. Ցարական ոստիկանությունը մեղադրում էր ՀՅԴ-ականներ Հ. Քաջազնունուն, Ավ. Ահարոնյանին, անգամ՝ Հ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին և այլ հայտնի հասարակական գործիչների: (Թվարկել առնվազն 1-2 հայտնի գործչի անուն)
4. Առաջին աշխարհամարտի նախօրեին Արևելյան Հայաստանում հաճախակի էին տեղի ունենում հուզումներ և սոցիալական ելույթներ :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Օրինակներով ցույց տալ, որ Պետական դումայի ցրումից հետո Երկրում սկսվեցին գործադուլներ, բռնություններ, սոցիալական և ժողովրդական հուզումներ: (Նշել առնվազն 1-2 օրինակ)
2. Հիմնավորել, որ Դաշնակցության գործի ստեղծման հիմնական պատճառը կեղծ էր և քանի որ մեղադրանքներն ապացուցել հնարավոր չեղավ, ձերբակալվածների մեծ մասն ազատ արձակվեց :

Դաս 3. Ազատագրական պայքարն Արևմտյան Հայաստանում 20-րդ դարի սկզբին :

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ինչպիսի՞ն էր արևմտահայության դրությունը 20-րդ դարի սկզբին:
2. Ե՞րբ և ում ղեկավարությամբ է տեղի ունեցել Առաքելոց վանքի կռիվը:
3. Ե՞րբ և ու՞մ գլխավորությամբ է տեղի ունեցել Սասունի երկրորդ ապստամբությունը Ո՞ր գյուղն էր ապստամբության կենտրոնը:
4. Ի՞նչ հիմնական պահանջ ունեին հայերը օսմանցիներից:
5. Ինչու՞ պարտվեց Սասունի ապստամբությունը: Ե՞րբ և որտեղ զոհվեց Գևորգ Չավուշը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Մշո Առաքելոց վանքի կռիվը տեղի է ունեցել 1901 թ. նոյեմբերի 3-27-ը, որը ղեկավարել է Անդրանիկը, ակտիվորեն են մասնակցել նաև Գևորգ Չավուշն ու Հակոբ Կոտոյանը:

2. Սասունի երկրորդ ապստամբությունը տեղի է ունեցել 1904 թ. Անդրանիկի գլխավորությամբ: Ապստամբության հայտնի ղեկավարներից էին նաև նշանավոր հայդուկապետեր Հրայրը և Գևորգ Չավուշը: Սասունի ապստամբության կենտրոնը նշանավոր Գելիեզուզան գյուղն էր :
3. Հայերը պահանջում էին իրագործել 1895 թ. ընդունված Մայիսյան բարենորոգումների ծրագիրը:
4. Նշանավոր հայդուկ Գևորգ Չավուշը զոհվեց 1907 թ մայիսի 27-ին Սուլուխի կռվում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում արևմտահայությունը ենթարկվում էր ազգային, գաղութային, կրոնական և սոցիալական ճնշումների:
2. Հիմնավորել, որ Սասունում հայերի պարտության հիմնական պատճառը ուժերի խիստ անհավասարությունն էր:
3. Գնահատել Առաքելոց վանքի կռվի և Սասունի ինքնապաշտպանության նշանակությունը:

Դաս 4. Երիտթուրքերի հեղաշրջումն ու արևմտահայերը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վքեր էին երիտթուրքերը և ե՞րբ նրանք եկան իշխանության:
2. Ե՞րբ է տեղի ունեցել Ադանայի հայության կոտորածը:
3. Ազգայնական ի՞նչ գաղափարախոսություններ առաջ քաշեցին երիտթուրքերը և ո՞րն էր նրանց նպատակը:
4. Ե՞րբ է ստեղծվել Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը:
5. Ինչպիսի՞ դիրքորոշում ունեին ազգային կուսակցությունները երիտթուրքերի նկատմամբ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Օսմանյան Թուրքիայում 1889 թ. ստեղծված «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներին Թուրքիայում կոչում էին երիտթուրքեր, նրանք իշխանության եկան 1908 թ.:
2. 1909 թ. ապրիլին թուրքական իշխանությունների կողմից Ադանայում սպանվեցին շուրջ 30000 հայեր:
3. Երիտթուրքերն առաջ քաշեցին պանթուրքիզմի և օղուզականության գաղափարախոսությունները:
4. Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը ստեղծվել է 1908 թ., Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Առանձնացնել, որ 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում արևմտահայությունը ենթարկվում էր ազգային, գաղութային, կրոնական և սոցիալական ճնշումների:
2. Բացատրել, որ Երիտթուրքերի նպատակը Մեծ Թուրան պետության ստեղծումն էր:
3. Ադանայի հայերի կոտորածի օրինակով ցույց տալ երիտթուրքերի հակահայ տրամադրվածությունը:
4. Տարբերակել ազգային կուսակցությունները երիտթուրքական հեղաշրջման սկզբում հավատում էին երիտթուրքերի ժողովրդավար էությանն ու համագործակցում նրանց հետ, բաց հետո համոզվելով, որ երիտթուրքերը շարունակում էմ հայերին բնաջնջելու աբդուլհամիդյան ծրագիրը, հրաժարվեցին նրանց հետ համագործակցությունից և պայքար սկսեցինՀայկական հարցի լուծման համար:

Դաս 5. Հայկական հարցը 1912-1914 թթ.

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Առաջին աշխարհամարտի նախօրյակին ե՞րբ և ու՞մ գլխավորությամբ վերաբացվեց Հայկական հարցը:
2. Ե՞րբ ստեղծվեց Ազգային պատվիրակությունը և ու՞մ գլխավորությամբ :
3. Ո՞ր երկրներն էին շահագրգռված հայկական բարենորոգումներով:
5. Ե՞րբ է կնքվել հայկական բարենորոգումների մասին ռուս-թուրքական համաձայնագիրը, ինչ էր այն իրենից ներկայացնում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1912 թ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը պաշտոնապես դիմեց Ռուսաստանին՝ խնդրելով վերաբացել Հայկական հարցը և կատարել բարեփոխումներ:
2. Ազգային պատվիրակությունը ստեղծվեց 1912 թ եգիպտահայ մեծահարուստ, հասարակական գործիչ Պողոս Նուբարի գլխավորությամբ:
3. Հայկական բարենորոգումների հարցով առավել շահագրգռված էին հատկապես Ռուսաստանը և Գերմանիան :
5. Հայկական բարենորոգումների մասին ռուս-թուրքական համաձայնագիրը կնքվել է 1914 թ. հունվարին :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Առանձնացնել ռուս-թուրքական համաձայնագրի 2-3 կետ. Արևմտյան Հայաստանը բաժանվելու էր երկու նահանգի, կառավարիչներ էին լինելու եվրոպացիներ, հայերենը, քրդերենն ու թուրքերենը լինելու էին պաշտոնական լեզուներ համիդիե գնդերը պիտի լուծարվեին և այլն
2. Բացատրել, որ ռուս-թուրքական համաձայնագիրը գործնական առումով չէր ապահովում հայերի ո՛չ անձնական անվտանգությունը, ո՛չ էլ գույքի և սեփականության անձեռնամխելիությունը:

Գլուխ 6

Հայաստանը և հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտի տարիներին

Դաս 1.Առաջին համաշխարհային պատերազմի կովկասյան ճակատը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ է սկսվել առաջին աշխարհամարտը: Ի՞նչ բնույթի էր այն:
2. Ո՞րն է համարվում Կովկասյան ճակատում պատերազմի սկզբնական փուլի ամենանշանավոր իրադարձությունը:
3. Նշեք ռուսական բանակի ամենակարևոր ձեռքբերումները կովկասյան ճակատում 1915-1916 թթ.:
4. Ե՞րբ և ի՞նչ պայմաններով է ստորագրվել Սայքս-Պիկոյի պայմանագիրը:
5. 1916 թ. վարչական ի՞նչ փոփոխության ենթարկվեց Արևմտյան Հայաստանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Առաջին աշխարհամարտը սկսվել է 1914 թ. հուլիսի 19-ին (օգոստոսի 1): Այն իր բնույթով անարդարացի էր, ծավալապաշտական, զավթողական:
2. Պատերազմի սկզբնական փուլի ամենանշանավոր իրադարձությունը Սարիշամիշի ճակատամարտն էր, որն ընթացել է 1914 թ.դեկտեմբերի 9-1915թ. հունվարի 5-ը:
3. 1915 թ. գարնանը և ամռանը ռուսական բանակը գրավեց Թավրիզը: 1916 թ. փետրվարին, գրավելով Էրզրումը, ռուսները տարան կովկասյան ճակատում իրենց ամենախոշոր հաղթանակը:
4. Սայքս-Պիկոյի համաձայնագիրը ստորագրվել է 1916թ. մայիսի 16-ին Անգլիայի և Ֆրանսիայի միջև:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Քարտեզի վրա ցույց տալ Սարիղամիշը, Էրզրումը:
2. Ընդհանուր կողմերով ներկայացնել Սայքս-Պիկոյի համաձայնագիրը: Սայքս-Պիկոյի համաձայնագրով ռուսական կողմին էին անցնելու սևծովյան նեղուցները, Կ.Պոլիսը և Արևմտյան Հայաստանի մեծագույն մասը, իսկ Կիլիկիան, Փոքր Հայքը և արաբական տարածքները բաժանվելու էին Անգլիայի և Ֆրանսիայի միջև: (Նշել պայմանագրի առնվազն 2 կետ)
3. Ցույց տալ 1916 թ. հունիսի 5-ին Նիկոլայ 2-րդի կողմից հաստատված Թուրքիայից պատերազմի իրավունքով գրավված տարածքի կառավարման ժամանակավոր կարգը. Արևմտյան Հայաստանում ստեղծվեց հատուկ գեներալ-նահանգապետու-թյուն, կազմվեցին 29 օկրուգներ, որոնք միավորվեցին 4 մարզերի՝ Վանի, Խնուսի, Էրզրումի, Տրապիզոնի մեջ: (Նշել առնվազն 1-2 մարզի անուն)

Դաս 2. Հայ կամավորական շարժումը

[Թեմատիկ պլան]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ ակնկալիքներ ունեին հայերը աշխարհամարտից:
2. Ո՞վ էր ղեկավարում հայ կամավորական շարժման կազմակերպման աշխատանքները, ո՞ր երկրներից էին հայերը կամավորագրվում:
3. Ովքե՞ր էին կամավորական ջոկատների հրամանատարները:
4. Որքա՞ն էր հայ կամավորների ընդհանուր թիվը 1915 թ. վերջին և 1916թ. սկզբին:
5. Ինչի՞ վերածվեցին կամավորական ջոկատները 1916թ. մարտ- օգոստոս ամիսներին. Որքա՞ն էր նրանց թիվը 1917թ. հունվարի 1-ի դրությամբ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայ կամավորական շարժման կազմակերպման աշխատանքները ղեկավարում էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի գործադիր մարմինը՝ Հովսեփ Արղությանի գլխավորությամբ:
2. Կամավորագրվում էին հայ քաջորդիներ Ռուսաստանից, Բալկաններից, ԱՄՆ-ից և այլ վայրերից:
3. Իմանա կամավորական ջոկատների քանակը և հրամանատարների անունները: Քեռի, Նիկոլ Աղբալյան, Ա. Ջանփոլադյան, Հովսեփ Արղության, Անդրանիկ, Դրո (Նշել առնվազն 3-4 հրամանատարի անուն):
4. Ստեղծվել են 8 կամավորական ջոկատներ, որոնցում ընդգրկված կամավորների ընդհանուր թիվը 1915 թ. վերջին և 1916 թ. սկզբին հասնում էր 10.000-ի:
5. 1916 թ. մարտ- օգոստոս ամիսներին կամավորական ջոկատներից ձևավորվեցին 6 հրաձգային գումարտակներ, որոնցում ընդգրկված մարտիկների թիվը 1917 թ. հունվարի 1-ի դրությամբ 6.000 էր:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ հայերը աշխարհամարտից հույս ունեին ռուսական զորքի օգնությամբ իրականացնել հայկական նահանգների և Կիլիկիայի ինքնավարության հաստատումը Ռուսաստանի հովանու ներքո և այդ նպատակով ստեղծվեցին կամավորական ջոկատներ:
2. Լրացնել կամավորական ջոկատների մասին աղյուսակը.(Լրացնել առնվազն 3-4 հրամանատարի անուն)

Ջոկատ		ամանատար	

	I		
	II		
	ուարատյան գունդ		

Դաս 3. Հայոց Մեծ եղեռնը

[Թեմատիկ պլան]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ եք հասկանում Հայոց Մեծ եղեռն ասելով:
2. Ե՞րբ և ու՞մ կողմից է ծրագրվել հայոց ցեղասպանությունը:
3. Ի՞նչ փուլերով է ընթացել Հայոց Մեծ եղեռնը:
4. Նշեք առավել հայտնի եղեռնազոհ հայ մտավորականների անուններ:
5. Ե՞րբ և ո՞ր վայրերում տեղի ունեցան ինքնապաշտպանական մարտեր:
6. Ի՞նչ նշանակություն ունեցան ինքնապաշտպանական մարտերը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայոց մեծ եղեռնը Օսմանյան Թուրքիայի կողմից դեռևս մինչև Առաջին աշխարհամարտը պետականորեն մշակված և նախապատրաստված, հայերի հայրենազրկման և ոչնչացման ծրագիր էր, որը հիմանականում իրագործվեց 1914 թ. հոկտեմբերի վերջից մինչև 1916 թ. ամառը:
2. Հայոց ցեղասպանության հիմնական կազմակերպիչները երիտթուրքերի պարագլուխներն էին:
3. Հայոց մեծ եղեռնը ընթացել է 3 հիմնական փուլերով:
4. Եղեռնազոհ նշանավոր հայ մտավորականներից էին Գրիգոր Զոհրապը, Վարդգեսը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը, Կոմիտասը և այլոք:
5. Արևմտյան Հայաստանի և կայսրության այն բնակավայրերը, որտեղ կազմակերպվել են ինքնապաշտպանական մարտեր. Վան, Սասուն, Շապին Կարահիսար, Մուսա լեռ, Ուրֆա: (Թվարկել առնվազը 3 բնակավարի անվանում)

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. բացատրել Հայոց մեծ եղեռնի իրականացման փուլերը
   ա. Ոչնչացնել հայ տղամարդկանց/ կռվող ուժ/,
   բ. Ոչնչացնել հայ մտավորականներին/ կազմակերպող, միավորող ուժ,
   գ. Ոչնչացնել, տեղահանել, կտտանքների ենթարկել անպաշտպան մնացած կանանց, երեխաներին, ծերերին:

2. Համապատասխանեցնել. (Ղեկավարների անունների դիմաց նշել առնվազն 1-2 ինքնապաշտպանական վայրի անուն)

Ղեկավարը/ ղեկավարները		Վայր	
1	Ղուկաս Տեովլեթյան	1	
2	Մկրտիչ Յոթնեղբայրյան	2	
3	Հակոբ Կոտոյան	3	
4	Բաղդիկ Սիմոնյան	4	
5	Արմենակ Եկարյան, Հայկակ Կոսոյան	5	
6	Տիգրան Անդրեասյան	6	

3. Քարտեզի վրա ցույց տալ երկու բնակավայր, որտեղ կազմակերպվել են ինքնապաշտպանական մարտեր:
4. Արժևորել ինքնապաշտպանական մարտերի նշանակությունը. ինքնապաշտպանական մարտերի արդյունքում տասնյակ հազարավոր մարդիկ փրկվեցին:

Դաս 4 Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի սկիզբը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞րն է Հայոց ցեղասպանության ծանրագույն հետևանքը հայ ժողովրդի համար:
2. Որքա՞ն մարդկային և նյութական կորուստ կրեց հայ ժողովուրդը Հայոց Մեծ եղեռնի հետևանքով:
3. Հայոց ցեղասպանությունը դատապարտած ի՞նչ նշանավոր գործիչների անուններ գիտեք:
4. Ի՞նչ է «Ցեղասպանություն» հասկացությունը՝ ըստ ՄԱԿ-ի կոնվենցիայի:
5. Ի՞նչ է իրենից ներկայացնում «Նեմեսիս» ծրագիրը և ո՞րն է «Նեմեսիս»-ի առաջին նշանավոր գործողությունը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Ցեղասպանությանը զոհ գնաց 1.5 միլիոն մարդ:
2. Հայոց ցեղասպանությունը դատապարտեցին ժամանակի նշանավոր առաջադեմ գործիչներ Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեվիդ Լլոյդ Ջորջը, պատմաբաններ Ջեյմս Բրայսը, Առնոլդ Թոյնբին, գերմանացի արևելագետ Յոհաննես Լեփսիուսը և ուրիշներ: (Նշել առնվազն 2-3 գործչի անուն)
3. «Նեմեսիս»-ի առաջին նշանավոր գործողությունը Սողոմոն Թեհլիրյանի կողմից 1921 թ.-ի մարտի 15-ին Բեռլինում Թալեաթ փաշայի մահապատիժն էր:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Հայոց ցեղասպանության ծանրագույն հետևանքը Արևմտյան Հայաստանի հայաթափումն ու հայերի հայրենազրկումն էր:
2. Շեշտադրել, որ ցեղասպանությունը որևէ ազգային, էթնիկական կամ կրոնական խմբի լիակատար կամ մասնակի ոչնչացման նպատակով կատարված 5 գործողություններ են: (Նշել առնվազն 1 գործողություն)

3. Ցույց տալ, որ «Նեմեսիս»-ը ՀՅԴ կողմից խիստ գաղտնի պայմաններում կյանքի կոչված հայ վրիժառուական ծրագիր էր, որն ուղղած էր թուրք ջարդարարների և նրանց օժանդակած հայ դավաճանների դեմ:
4. Կարծիք հայտնել «Նեմեսիս» ծրագրի վերաբերյալ:

Դաս 5. Հայ ազգային-քաղաքական կյանքի վերելքը: 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ է տեղի ունեցել Փետրվարյան հեղափոխությունը:
2. Ե՞րբ և ի՞նչ մարմին ստեղծվեց Անդրկովկասում Փետրվարյան հեղափոխությունից հետո, հայերից ո՞վ էր դրա կազմում:
3. Ի՞նչ անվամբ առաջին անգամ պաշտոնապես ճանաչվեց Օսմանյան կայսրությունից նվաճված տարածքի հայկական մասը:
4. Ե՞րբ և որտե՞ղ են հրավիրվել Արևմտահայերի առաջին և Արևելահայերի առաջին համագումարները:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Փետրվարյան հեղափոխությունը տեղի է ունեցել 1917 թ. փետրվարի 27-ին Ռուսաստանում:
2. Փետրվարյան հեղափոխությունից հետո 1917 թ. մարտի 9-ին ստեղծվեց Անդրկովկասի Հատուկ կոմիտեն/ԱՀԿ/, որի կազմում էր ընդգրկված հայազգի Միքայել Պապաջանյանը:
3. Օսմանյան կայսրությունից նվաճված տարածքի հայկական մասը առաջին անգամ պաշտոնապես ձևակերպվեց Թուրքահայաստան անվամբ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Համեմատել Արևմտահայերի առաջին համագումարի և Արևելահայերի ներկայացուցչական համաժողովի հրավիրման վայրերը:
2. Արևմտահայերի առաջին համագումարը տեղի է ունեցել 1917 թ. մայիսին Երևանում: Արևելահայերի ներկայացուցչական համաժողովը՝ Հայոց ազգային համախորհրդակցությունը հրավիրվել է Թիֆլիսում 1917 թ. աշնանը:

Դաս 6. Բոլշևիկյան հեղաշրջումը և Հայաստանը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ մարմին ստեղծվեց Անդրկովկասում բոլշևիկյան հեղաշրջումից հետո:
2. Ե՞րբ և ու՞մ միջև է ստորագրվել Երզնկայի զինադադարը:
3. Ե՞րբ է ընդունվել Թուրքահայաստանի մասին հրովարտակը և ո՞րն էր դրա դրական նշանակությունը:

4. Ո՞վ նշանակվեց արևմտահայերից կազմավորվող դիվիզիայի հրամանատար:
5. Ե՞րբ, ու՞մ միջև է ստորագրվել Բրեստ -Լիտովսկի պայմանագիրը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Անդրկովկասում բոլշևիկյան հեղաշրջումից հետո ստեղծվեց Անդրկովկասյան կոմիսարիատը, որի 3 անդամները հայեր էին:
2. Երզնկայի զինադադարը ստորագրվել է Անդրկոմիսարիատի և Թուրքիայի միջև 1917 թ. դեկտեմբերին :
3. Թուրքահայաստանի մասին հրովարտակը ընդունվել է 1917 թ. դեկտեմբերի 29-ին:
4. Ռուսական զորքերի կողմից նվաճված մարզերի հայ բնակչությունից կազմավորված Արևմտահայ դիվիզիայի հրամանատար նշանակվեց Անդրանիկ Օզանյանը:
5. Բրեստ-Լիտովսկի պայամանագիրը ստորագրվել է 1918 թ. մարտին Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության երկրների միջև

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

2. Բացատրել որ հրովարտակով Խորհրդային Ռուսաստանը պաշտոնապես ճանաչում էր հայ ժողովրդի ազատ ինքնորոշման և ազգային անկախ պետություն ունենալու իրավունքը:
3. Ցույց տալ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հակահայ ուղղվածությոունը. բոլշևիկները հանուն իրենց իշխանության պահպանման ոտնահարեցին հայ ժողովրդի իրավունքները:

Դաս 7. Իրադրությունը Հայաստանում և Այսրկովկասում (1918թ. հունվար-ապրիլ)

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Երբվանի՞ց և ու՞մ ղեկավարությամբ է սկսել գործել Անդրկովկասյան Սեյմը:
2. Որտե՞ղ ձևավորվեց հայկական միասնական ճակատը, ովքե՞ր էին առավել աչքի ընկնող գործիչները:
3. Ինչու՞ թուրքերնը գրավեցին ոչ միայն Արևմտյան , այլ նաև Արևելյան Հայաստանի մի մասը:
4. Ի՞նչ է առանձին հայկական կորպուսը :
5. Ե՞րբ են ընթացել Տրապիզոնի բանակցությունները:
6. Ե՞րբ է Անդրկովկասն անջատվել Ռուսաստանից :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Անդրկովկասյան Սեյմը սկսել է գործել 1918 թ. փետրվարից, մենշևիկ Չխեիձեի նախագահությամբ
2. Հայկական միասնական ճակատը ձևավորվեց Բաքվում: Նշանավոր գործիչներից էին Ռոստոմը, գեներալ Հակոբ Բագրատունին, Սեբաստացի Մուրադը, Համազասպը: (Նշել առնվազն 1 գործչի անուն)
4. Առանձին հայկական կորպուսը գեներալ Թ. Նազարբեկյանի գլխավորությամբ 1918 թ մարտին ստեղծված զորամիավորում է:
5. Տրապիզոնում Թուրքիայի և Անդրկովկասի միջև 1918 թ. մարտի 1-ից ապրիլի 1-ն ընթացան բանակցություններ:
6. 1918 թ. ապրիլին Անդրկովկասն իրեն Ռուսաստանից անկախ հայտարարեց , ստեղծվեց Անդրկովկասի ժողովրդավարական դաշնային հանրապետությունը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ թուրքերին հնարավորություն ունեցան գրավել ոչ միայն Արևմտյան , այլ նաև Արևելյան Հայաստանի մի մասը Անդրկովկասյան իշխանությունների հակահայ քաղաքականության պատճառով :
2. Կարծիք հայտնել հայկական զորքի վերակազմակերպման անհրաժեշտության վերաբերյալ:

Դաս 8 . 1918թ Մայիսյան հերոսամարտերը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ինչպիսի՞ն էր իրադրությունն Անդրկովկասում 1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին:
2. Որտե՞ղ էին ընթանում թուրք-անդրկովկասյան բանակցությունները :
3. Որո՞նք էին Մայիսյան հերոսամարտերը ,ե՞րբ են դրանք տեղի ունեցել :
4. Հայ անվանի զինվորականներից ովքե՞ր էին գլխավորում Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը :
5 . Գնահատեք Մայիսյան հերոսամարտերը, նշեք դրանց գլխավոր արդյունքը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին Անդրկովկասում ռազմաճակատը գրեթե դատարկվել էր՝ մնալով բացառապես հայկական փոքրաթիվ ուժերի պաշտպանության հույսին: Թշնամին գրավել էր Կարսը, Սարիղամիշն ու Ալեքսանդրապոլը: Թուրքերը մոտենում էին Երևանի սահմանագծին:
2. Թուրքիա-Անդրկովկաս բանակցություններն ընթանում էին Բաթումում::
5. Գևորգ Ե Սուրենյանցը հրաժարվեց լքել Վաղարշապատն ու գնալ ավելի ապահով Բյուրական իր ժողովրդի կողքին լինելու և իր անձնական օրինակով ոգևորելու համար: Կազմավորվեց նաև հոգևորականների ջոկատ՝ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի գլխավորությամբ :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Ըստ ժամանակագրության թվարկել Մայիսյան երեք նշանավոր հերոսամարտերը:
   Սարդարապատի՝ 1918թ մայիսի 22-28-ը
   Բաշ-Ապարանի՝ 1918թ մայիսի 23-29-ը
   Ղարաքիլիսայի՝ 1918թ մայիսի 25-30-ը :

2. Թվարկել Մայիսյան հերոսամարտերին աչքի ընկած հայ զորավար-հրամանատարներին՝ համապատասխանեցնելով իրենց պաշտպանած ճակատներին: Մայիսյան հերոսամարտերում աչքի են ընկել Մ Սիլիկյանը , Դ. Բեկ-Փիրումյանը , Ա. Մանուկյանը / Սարդարապատ/, Դրաստամատ Կանայանը / Բաշ-Ապարան/, Գարեգին Նժդեհը ,Ա. Բեյ-Մամիկոնյանը / Ղարաքիլիսա / (Առնվազն 1 ական անուն):

3. Գնահատել հայ հոգևորականության և Հայոց եկեղեցու ազգապահպան դերակատարումը այդ օրհասական պահերին :

4. Արժևորել հերոսամարտերի նշանակությունը: Մայիսյան հերոսամարտերի ամենակարևոր նշանակությունն այն էր, որ մոտ հազարամյա ընդմիջումից հետո մայր հայրենիքում հայ ժողովուրդը կարողացավ պայքարի գնով վերականգնել անկախ պետականությունը և ձախողվեց հայերին վերջնականապես բնաջնջելու երիտթուրքերի ծրագիրը:

5. Քարտեզի վրա ցույց տալ Սարդարապատը, Բաշ Ապարանը, Ղարաքիլիսան:

Բաժին 1

ՊԱՅՔԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ /17-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉև 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ /

Գլուխ 1

Մշակույթը 17-րդ դարի 2-րդ կեսին և 19-րդ դարի 1-ին կեսին

Դաս 1. Մշակութային ձեռքբերումները 17-րդ դարի 2-րդ կեսին և 18-րդ դարում:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Տվյալ ժամանակաշրջանում որտե՞ղ էր զարգանում հայ մշակույթը:
1. Ո՞ր հանգամանքներն են հատկապես նպաստել մշակույթի զարգացմանը:
2. Որտե՞ղ են հիմնվել առաջին հայկական դպրոցները:
3. Ո՞վ էր Սայաթ-Նովան:
4. Ո՞րն է առաջին հայ պարբերականը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. Հայ մշակույթը գերազանցապես զարգանում էր հայրենիքի սահմաններից դուրս՝ հայկական գաղթավայրերում:
2. Առաջին դպրոցները հիմնվել են եկեղեցիներին կից:
3. Սայաթ-Նովան սիրված բանաստեղծ ու երաժիշտ էր:
4. Հայ առաջին պարբերականը Ազդարարն է:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, թե ինչու ոչ թե բուն Հայաստանում , այլ գաղութներում էր առավել զարգանում հայ մշակույթը և թվարկել մշակույթի զարգացմանը նպաստող 1-2 հանգամանքներ.
   ա/ շփումները եվրոպական այլ քաղաքակրթությունների հետ,
   բ/ առևտրաարդյունաբերող խավի հովանավորչությունը
   գ/ հասարակական հարաբերությունների առջև դրված նոր պահանջները :
2. Գնահատել դպրոցների դերը ազգապահպանության գործում :
3. Բնութագրել Սայաթ-Նովային՝ որպես բանաստեղծ և երգիչ :
4. Կարևորել հայ առաջին պարբերականի՝ Ազդարարի դերը հնդկահայ գաղութի կյանքում :

Դաս 2 . Հայ մշակույթը 19-րդ դարի 1-ին կեսին

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1.Ե՞րբ և որտե՞ղ է հիմնվել
ա/ Աղաբաբյան դպրոցը:
բ/ Լազարյան ճեմարանը:
գ/ Ներսիսյան դպրոցը:
2.Ո՞վ է Խաչատուր Աբովյանը:
3. Ո՞րն է ամենաերկար հրատարակվող հայ պարբերականը :
4.Արվեստի ի՞նչ հայտնի գործիչների կամ նրանց ճանաչված գործեր կարող եք նշել :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայկական դպրոցների հիմնադրման վայրերը. Աղաբաբյան դպրոցը՝ Աստրախան, Լազարյան ճեմարանը՝ Մոսկվայ, Ներսիսյան դպրոցը՝ Թիֆլիս:

2. Խ. Աբովյանը , բացի նշանավոր գրող լինելուց, նաև մանկավարժ էր, հայ նոր գրականության հիմնադիրը:
3. Ամենաերկար հրատարակվող պարբերականը Բազմավեպն է , որը հրատարակվում է 1843 թ.-ից Վենետիկում:
4. Նշանավոր էին նկարիչ Հովնաթանյանները, Ստ. Ներսիսյանը , թատերագետ Գ. Շերմազանյանը, երաժիշտ Հ. Լիմոնճյանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

1. Ըստ ժամանակագրության թվարկել հայտնի հայկական դպրոցները
   1. Աղաբաբյան դպրոցը՝ 1810 թ
   2. Լազարյան ճեմարանը 1815 թ.
   3. Ներսիսյան դպրոց՝ 1824 թ.
   2. Բացատրել Խ. Աբովյանի՝ որպես գրող և մանկավարժ գործունեությունը:
   3. Թվարկել հև համեմատել մշակութային նշանավոր գործիչների անուններ և նշել, թե արվեստի որ ճյուղի ներկայացուցիչ է տվյալ գործիչը /2-3 գործիչ/:
   4. Արժեվորել մշակույթի կարևոր ձեռքբերումները հայ և համաշխարհային մշակույթի տեսանկյունից :

Գլուխ 2 . XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի մշակութային վերելքը

Դաս 1. Հայ մշակույթի կենտրոնները: Կրթական կյանքը:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք էին 19-րդ դարի վերջից 20-րդ դարի սկզբին Հայաստանից դուրս գործող հայ մշակույթի նշանավոր երկու կենտրոնները:
2. Ե՞րբ և որտե՞ղ է հիմնադրվել Գևորգյան ճեմարանը:
3. Որո՞նք էին Արևելյան Հայաստանում գործող նշանավոր դպրոցները
4. Որո՞նք էին 19-րդ դարի վերջից 20-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանի տարածքում գործող կրթական ամենանշանավոր հաստատությունները:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Հայաստանից դուրս գործող հայ նշանավոր կրթական կենտրոններ էին Մխիթարյան միաբանությունը, Մուրադ-Ռափայելյան վարժարանը:
2. Գևորգյան ճեմարանը հիմնադրվել է 1874 թ. էջմիածնում:
3. 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Արևելյան Հայաստանի տարածքում կարևոր նշանակություն ունեին Երևանի գավառական, Հռիփսիմյան, Շուշիի և Երևանի իգական դպրոցները: (Նշել առնվազն 2 կրթական հաստատություն)
4. 19-րդ դարի վերջից 20-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանի տարածքում գործում էին Արմաշի դպրեվանքը, Վարագա վանքի Ժառանգավորաց վարժարանը, Վանի «Վարժապետանոցը», Սանասարյան վարժարանը: (Նշել առնվազն 2 կրթական հաստատություն)

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Լրացնել աղյուսակը.

Դպրոց		Վայր	
1		1	
2		2	
3		3	

2. Արժևորել դպրոցների դերը հայապահպանության գործում:

Դաս 2-3. – Բնական և հումանիտար գիտությունների զարգացումը:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ովքե՞ր էին 19-րդ դարի երկրորդ կեսի 20-րդ դարի սկզբի մշակույթի բնական գիտությունների ակնառու հայ ներկայացուցիչները:
2. Ո՞վ է համարվում գունավոր հեռուստատեսության ստեղծողը:
3. Ի՞նչ գիտեք 19-րդ դարի երկրորդ կեսի 20-րդ դարի սկզբի պատմագիտական մտքի ակնառու ներկայացուցիչների մասին:
4. Ի՞նչ գիտեք 19-րդ դարի երկրորդ կեսի 20-րդ դարի սկզբի ակնառու հայագետների մասին:
5. 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին փիլիսոփայության ո՞ր ուղղությունները զարգացան:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Բնական գիտությունների նշանավոր գործիչներից են Անդրեաս Արծրունին, Ջակոմո Չամչյանը, Լևոն Օրբելին և ուրիշներ:(Նշել առնվազն 1 գործչի անուն)
2. Պատմագիտական մտքի ակնառու ներկայացուցիչներից են Ղևոնդ Ալիշանը, Ադոնցը, Լեոն, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը և այլոք: (Նշել առնվազն 1 անուն)
3. Ղևոնդ Ալիշանը Մխիթարյան միաբանության ակնառու ներկայացուցիչներից է, ով թողել է ավելի քան 45 հատոր հայագիտական աշխատություններ:
4. Հայ նշանավոր հայագետներից են Գր. Ղափանցյանը, Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը:(Նշել առնվազն 1 անուն)
5. Փիլիսոփայության զարգացող ուղղություններն են պահպանողականությունը և լուսավորականությունը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Գնահատել գունավոր հեռուստատեսության հիմնադիր Հովհաննես Ադամյանի հայտնագործության դերը:
2. Թվարկել մշակութային նշանավոր գործիչների անուններ և նշել, թե որ բնագավառի ներկայացուցիչ է տվյալ գործիչը /2-3 գործիչ/:

Դաս 4. Գրականություն և մամուլ

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Տվյալ ժամանակաշրջանում ստեղծագործած նշանավոր ի՞նչ գրողներ, բանաստեղծներ և նրանց ստեղծագործություններից գիտեք:
2. Ո՞ր ստեղծագործությունը կամ հերոսին եք նախընտրում, ինչո՞ւ:
3. Որտե՞ղ և ի՞նչ նշանավոր պարբերականներ էին հրատարակվում :
4. Քանի՞ պարբերական էր հրատարակվում XX դդ դարի սկզբին:
5. Ինչպիսի՞ն էր մամուլի դերը հասարակական և քաղաքական կյանքում :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Ժամանակի նշանավոր գրողներից և բանաստեղծներից են Մ. Նալբանյանը, Ռաֆֆին, Նար-Դոսը, Հ. Թումանյանը, Շիրվանզադեն, Վ. Տերյանը, Գրիգոր Զոհրապը, Վարուժան, Սիամանթո, Ռափայել Պատկանյան, Միսակ Մեծարենց, Երվանդ Օտյանը, Ավ. Իսահակյան և ուրիշներ : (Թվարկել առնվազն 4 անուն)
2. Թիֆլիսում հրատարակվում էր «Մշակը», Մոսկվայում՝ «Հյուսիսափայլը» : Հրատարակվում էին նաև կուսակցական պարբերականներ :
3. 20 դդ դարի սկզբին հրատարակվում էր ավելի քան 1000 անուն պարբերական:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Լրացնել աղյուսակը.

Հեղինակ		Ստեղծագործություն	
1		1	
2		2	
3		3	

2. Առանձնացնել իր համար նախընտրելի մեկ ստեղծագործություն կամ գրական հերոս, բացատրել, թե ինչու է նախընտրում տվյալ ստեղծագործությունը կամ հերոսին:
3. Բացատրել, որ մամուլը մեծապես նպաստում էր հասարակական կյանքի զարգացմանը, աշխարհայացքի ձևավորմանը :

Դաս 5. Արվեստը և ճարտարապետությունը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Արվեստի ո՞ր ճյուղերն էին առավել զարգացած տվյալ ժամանակաշրջանում:
2. Ի՞նչ նշանավոր նկարիչներ, երաժիշտներ, դերասաններ և ճարտարապետներ գիտեք:
3. Տվյալ ժամանակաշրջանում ստեղծագործած արվեստի գործիչների ի՞նչ ստեղծագործություններ գիտեք:
4. Ոճական և քաղաքաշինական ի՞նչ ընդհանրություններ կային հայ և եվրոպական արվեստի միջև :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. XIX դարի երկրորդ կեսին մեծ զարգացում ապրեցին արվեստի հետևյալ ճյուղերը՝ թատրոնը, կերպարվեստը, երաժշտությունը և ճարտարապետությունը:

2. Ժամանակի ամենաակնառու գործիչների՝ Կոմիտասի, Արմեն Տիգրանյանի Հ. Այվազովսկու, Մ. Սարյանի, անունները և թվարկի նրանց հայտնի ստեղծագործությունների անվանումները:
3. Որ տվյալ ժամանակաշրջանում ստեղծվել է ազգային թատրոնը: Հայ թատրոնը մեծ զարգացում ապրեց Կ.Պոլսում, Թիֆլիսում, Մոսկվայում և Պետերբուրգում, բացվեցին թատրոններ Երևանում, Ալեքսանդրապոլում, Վանում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել արվեստի ճյուղերի ամենանշանավոր ներկայացուցիչներին և նրանց ամենահայտնի ստեղծագործություններից:

Կերպարվեստ – Վ. Սուրենյանց, Հ. Այվազովսկի, Գ. Բաշինջաղյան, Մ. Սարյան Երաժշտություն – Ա. Տիգրանյան, Տ. Չուխաջյան, Կոմիտաս, Մակար Եկմալյան Թատրոն- Պետրոս Մաղաքյան, Պետրոս Ադամյան, Հակոբ Վարդովյան

2. Լրացնել աղյուսակը.

	Հեղինակ		Ստեղծագործություն		Արվեստի ուղղություն
1		1		1	
2		2		2	
3		3		3	
4		4		4	

3. Ըստ ոլորտների ներկայացնել 3-4 կարևոր ձեռքբերում, ճանաչել արվեստի ամենահայտնի գործերը:
4. Գնահատել հայ արվեստագետների ներդրումը հայ և համաշխարհային մշակույթում: Հայ արվեստագետների այդ ժամանակաշրջանի ձեռքբերումները կարևոր դերակատարում են ունեցել մշակույթի համաշխարհային զանձարանում: Դրանք դարձել են հիմք՝ հետագա ժամանակաշրջանում ազգային մշակույթի զարգացման համար:

Գլուխ 3
Հայկական գաղթավայրերի դերը հայապահպանության և մշակույթի զարգացման գործում (XVII դարի երկրորդ կես-XX դարի սկիզբ)

Դաս 1-2. Ասիայի, Աֆրիկայի, Ռուսաստանի, Եվրոպայի և ԱՄՆ-ի հայկական գաղութները

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր երկրներում էին գտնվում ամենահայաշատ գաղթավայրերը:
2. Տարբեր երկրների հայկական գաղթավայրերի հասարակական–մշակութային, քաղաքական -հոգևոր կյանքի վրա ո՞ր գործոններն էին ազդում:
3. Ի՞նչ գործունեություն էին ծավալում այս կամ այն երկրներում հաստատված հայերը:
4. Ե՞րբ են հիմնվել Ռուսաստանի հայկական գաղութները և Ռուսաստանի ո՞ր քաղաքներում կային ստվար հայկական բնակչություն:
5. Գաղութահայ ի՞նչ նշանավոր գործիչներ գիտեք:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայկական համայնքների հոգևոր-մշակութային, ազգային-հասարակական կյանքի վրա ազդում էին ինչպես հյուրընկալող երկրի առանձնահատկությունը, այնպես էլ համայքի կառուցվածքը, հայ բնակչության զբաղվածությունը և շահերը տվյալ երկրի հետ:
2. Տարբեր երկրներում հաստատված հայերը զբաղվում էին արհեստով, առևտրով , գյուղատնտեսությամբ, երբեմն նաև՝ ներգրավված էին հասարակական –քաղաքական կյանքում:
3. Ռուսաստանի հայկական գաղութները հիմնվել են XVIII դարում: Նոր Նախիջևան /Դոնի Ռոստով/ քաղաքը ամենախոշոր հայկական գաղութն էր:
4. ԱՄՆ ում առաջին հայկական համայնքները ձևավորվեցին Նյու Յորք, Բոստոն, Վուսթեր քաղաքներում:
5. Գաղութահայ հայտնի գործիչների անուններ. Մելքոն Խան, Եփրեմ Խան, Պողոս Նուբար, Գալուստ Կյուլպենկյան, նշանավոր Պալյաններ և ուրիշներ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել նոր ժամանակների հայաշատ գաղթավայրերի անվանուներ. Սիրիա, Լիբանան, Ռուսաստան, Իրան, Հնդկաստան, Ֆրանսիա, Ամերիկայի միացյալ նահանգներ:
2. Գնահատել հայկական գաղթավայրերի հայապահպան դերակատարումը: .Հայ ժողովրդի կյանքում գաղութներն իրականացրել են ազգապահպան դերակատարում, ինչպես նաև հայկական մշակույթը տարածել են աշխարհի տարբեր կողմերում:

ՄԱՍ Դ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ
ԲԱԺԻՆ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ Գլուխ 1
Երկրի ներքին կյանքը

Դաս 1. Հայկական պետականության ձևավորումն ու ամրապնդումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ և ի՞նչ պայմաններում հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը և ո՞ր երկիրն առաջինը ճանաչեց ՀՀ անկախությունը:

2. Ի՞նչ պարտավորություններ և պայմաններ էր նախատեսում Բաթումի պայմանագիրը:

3. Որոնք էին ՀՀ իշանության բարձրագույն մարմինները, ի՞նչ նշանավոր գործիչների գիտեք:

4. Որքա՞ն էր ՀՀ տարածքը և բնակչությունը 1920 թ. մայիսին:

5. Որքանո՞վ էր կարևորվում ազգային բանակի դերը ՀՀ անվտանգության համար:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. ՀՀ-ն հռչակվեց 1918 թ. մայիսի 28-ին:

2. ՀՀ անկախությունն առաջինը ճանաչեց Օսմանյան Թուրքիան:

3. Բաթումի պայմանագրով ՀՀ-ի վրա դրված պարտավորություններից էին զորքի կրճատումը, Բաքվից հայկական զորամասերի դուրս բերումը, հայկական որոշ գավառների և երկաթուղու վերահսկողության անցումը Թուրքիային և այլն: (Նշել պայմանագրի առնվազն 2-3 կետ)

4. ՀՀ օրենսդիր բարձրագույն մարմինը Հայաստանի խորհուրդն էր, գործադիրը՝ Նախարարների խորհուրդը, ստեղծվեց Երդվյալ ատենակալների դատարան:

5. Նշանավոր գործիչներից էին՝ Արամ Մանուկյանը, Հովհաննես Քաջազնունին, Ալեքսանդր Խատիսյանը և այլոք:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել ՀՀ ստեղծվեց Անդրկովկասում և տարածաշրջանում ստեղծված բարդ ռազմաքաղաքական բարդ պայմաններում:
2. Գնահատել զինված ուժերի դերը ՀՀ անվտանգության և խաղաղության ապահովման գործում:
3. Արժեվորել, որ բազմադարյա անկախության կորստից հետո Հայաստանում վերականգնվեց անկախ պետականությունը:
4. **Համապատասխանեցնել 2-3 փաստ:**

	Գործիչ		**Առնչությունը**
	Ավետիք Սահակյան		ՀՀ առաջին վարչապետ
2	Արամ Մանուկյան	2	ՀՀ զինանշան
3	Հովհաննես Քաջազնունի	3	Հայաստանի խորհրդի առաջին նախագահ
4	Ալեքսանդր Թամանյան և Հակոբ Կոջոյան	a. 4	ՀՀ արտաքին գործերի առաջին նախարար
5	Ալ. Խատիսյան	5	սպարապետ
6. 6	Թովմաս Նազարբեկյան	5. 6	ՀՀ ներքին գործերի նախարար
7	Բարսեղ Կանաչյան	7	ՀՀ ռազմական նախարար
8	Հովհաննես Հախվերդյան	8	ՀՀ օրհներգի երաժշտություն

Դաս 2. Սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչն էր ՀՀ սոցիալ-տնտեսական վատ իրավիճակի հիմնական պատճառը:
2. ՀՀ կառավարությունն ի?նչ քայլեր ձեռնարկեց տնտեսության վերականգնման համար:
3. ՀՀ-ում ի՞նչ քաղաքական ուժեր կային և ի՞նչ գործունեություն էին ծավալում:
4. Ովքե՞ր էին բոլշևիկներն ու ինչպիսի՞ դիրքորոշում ու դեր ունեին առաջին հանրապետության կյանքում:
5. Բացատրել Ամերկոմ և Արմենկոմ հասկացությունները:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. ՀՀ կառավարությունը տնտեսության վերականգնման նպատակով դիմեց արտասահմանում բնակվող հայ կապիտալիստներին, վերագործարկվեցին բազմաթիվ արտադրամասեր և գործարաններ, շահագործվեց երկաթուղին, մտցվեց հացի և այլ կարևոր մթերքների մենաշնորհ:

Օգնություն էր տրամադրվում նաև գաղթականությանն ու չքավոր բնակչությանը: (Նշել ՀՀ կառավարության իրականացրած 2-3 միջոցառում)
2. ՀՀ –ում ամենաազդեցիկը ՀՅԴ-ն էր: Բազմակուսակցական պետությունում բոլոր ուժերը համագործակցում էին կառավարության հետ , բացի բոլշևիիկներից :
3. Բոլշևիիկները սպասում էին հարմար առիթի՝ Հայաստանում հեղաշրջում անելու և խորհրդային կարգեր հաստատելու՝ հենվելով խորհրդային Ռուսաստանի վրա

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Ընդհանուր գծերով ներկայացնել տնտեսական ծանր իրադրության պատճառները, բացատրել, որ Հանրապետության տնտեսությունը գտնվում էր կազմալուծված, քայքայված վիճակում՝ նախ և առաջ պատերազմի, ապա նաև գաղութային կախվածության, եղեռնից մազապուրծ հարյուր հազարավոր գաղթականների առկայության, ճանապարհների բացակայության պատճառով:
2. Բացատրել Ամերկոմ և Արմենկոմ հասկացությունները. Ամերկոմ-Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտե , Արմենկոմ-Հայաստանի կոմիտե: (Բացատրել այս հասկացություններից առնվազն 1 ը)

Դաս 3. Երկրի կայունությանը սպառնացող վտանգները

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք էին երկրի կայունությանը սպառնացող վտանգները:
2. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց ՀՀ կառավարությունը սպառնալիքներին հակազդելու համար:
3. Ե՞րբ տեղի ունեցավ բոլշևիկյան Մայիսյան ապստամբությունը:
4. Ի՞նչ հետևանքներ ունեցավ Մայիսյան ապստամբությունը ՀՀ-ի համար:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Երկրի կայունությանը սպառնացող վտանգներն էին սոցիալ-տնտեսական ծանր պայմանները , հարևանների հետ չլուծված սահմանային խնդիրները , ինչպես նաև ներքին հակասությունները, թուրք-թաթարական խռովությունները, բոլշևիկների դիրքորոշումը: (Թվարկել առնվազն 2 փաստ)
2. Խնդիրները խաղաղ լուծելու փորձերի ձախողումից հետո կառավարությունը զենքի միջոցով ճնշեց ՀՀ տարբեր տեղերում սկսված թաթարների խռովությունները:
3. 1920 թ մայիսի 10-13-ը բոլշևիկները Հայաստանի տարբեր վայրերում, հատկապես Ալեքսանդրապոլում սկսեցին ապստամբություններ: Դրանք ղեկավարում էր Սարգիս Մուսայելյանը և ՀՌՀԿ-ն :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Հիմնավորել, որ թուրք-թաթարական խռովությունները սպառնալիք էին երկրի կայունության համար:
2. Վերհանել Մայիսյան ապստամբության բացասական հետևանքը հանրապետության կյանքում՝ այն է՝ Մայիսյան ապստամբությունը թուլացրեց երկրի առանց այն էլ ծանր դրությունը:
3. Ցույց տալ, որ մայիսյան ապստամբությունն ավարտվեց բոլշևիկների պարտությամբ և Հայաստանում արգելվեց նրանց գործունեությունը:

Դաս 4. Առաջին հանրապետության մշակութային կյանքը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ վիճակում էր գտնվում մշակութային կյանքը և մշակույթի բնագավառում ի՞նչ առաջնահերթ խնդիրներ ուներ ՀՀ կառավարությունը:
2. Մշակույթի բնագավառում ի՞նչ քաղաքականություն էր վարում ՀՀ-ն:
3. Ե՞րբ և որտե՞ղ է հիմնադրվել Երևանի պետական համալսարանը:
4. Առաջին հանրապետության գոյության տարիներին ի՞նչ հայտնի մշակութային գործիչների գիտեք:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Պատերազմի և սոցիալ-տնտեսական ծանր իրադրության պատճառով կրթությունն ու մշակույթը գտնվում էին ծայրահեղ ծանր վիճակում, դպրոցները վերածվել էին ռազմական հաստատությունների, քայքայվել էր մշակույթը:
2. Հիմնվում էին ինչպես կրթության գործի կազմակերպման հաստատություններ, այնպես էլ դպրոցներ , ուսումնական հաստատություններ , ուսուցչական սեմինարիա, թանգարաններ և այլ հաստատություններ : Կազմակերպվում էր նաև ազգային փոքրամասնությունների , ինչպես նաև Վրաստանի հայկական դպրոցների կրթական գործը : (Նշել առնվազն 2 փաստ)
3. Երևանի պետական համալսարանը հանդիսավոր բացումը կատարվել է 1920 թ. հունվարին Ալեքսանդրապոլում, հունիսին համալսարանը տեղափոխվեց Երևան:
4. Իրենց գործունեությամբ ՀՀ մշակութային կյանքին մեծ նպաստ բերեցին Հովհաննես Թումանյանը , Մարտիրոս Սարյանը, Լևոն Շանթը, Թորոս Թորամանյանը և ուրիշներ: (Նշել առնվազն 3 գործիչի անուն)

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել կրթության և գիտության զարգացման նպատակով իրականացված միջոցառումների կարևորությունը:
2. Կարծիք հայտնել մշակույթի բնագավառում իրականացված միջոցառումների ազգապահպան դեր:
3. Գնահատել ԵՊՀ դերը ինչպես Հայաստանի առաջին հանրապետության, այնպես էլ արդի կրթամշակութային կյանքում:

Գլուխ 2 .
Հանրապետության միջազգային դրությունը
Հայկական հարցը

Դաս 1 . ՀՀ արտաքին կապերը և հարաբերությունները /մաս 1/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞վքեր մեկնեցին Կ.Պոլիս և Վիեննա, ի՞նչ նպատակ ունեին տարբեր երկրներ այցելած հայկական պատվիրակությունները :
2. Ո՞ր երկրների հետ ՀՀ հաստատեց իր առաջին դիվանագիտական կապեր:
3. Ինչպիսի՞ն էին ՀՀ և Խորհրդային Ռուսաստանի հարաբերությունները:
4. Ո՞ր տարածքներն էին համարվում վիճելի հայ-վրացական հարաբերություն-ներում:
5. Ե՞րբ է տեղի ունեցել հայ-վրացական պատերազմը և ինչո՞վ ավարտվեց:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Բաթումի պայմանագրի վերանայման նպատակով Կ.Պոլիս մեկնեց Ավ. Ահարոնյանը, Բեռլին և Վիեննա՝ Հ. Օհանջանյանը:
2. ՀՀ դիվանագիտական կապեր հաստատեց Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Իրանի, Եգիպտոսի, Հունաստանի, Գերմանիայի, Ճապոնիայի, Վրաստանի և այլ երկրների հետ: (Թվարկել առնվազն 2 երկրի անվանում)
3. Հայ-վրացական հարաբերություններում վիճելի տարածքներ էին Լոռին և Ախալքալաքը (Ջավախքը):
4. Հայ-վրացական պատերազմը Լոռու և Ջավախքի համար տեղի է ունեցել 1918 թ. դեկտեմբերի երկրորդ կեսին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Հիմնավորել, որ Խորհրդային Ռուսաստանը չէր ճանաչում ՀՀ անկախությունը և դնում էր Հայաստանի խորհրդայնացման պահանջ:
2. Կարծիք հայտնել հակասությունները խաղաղ ճանապարհով լուծելու ՀՀ կառավարության ջանքերի մասին:
3. Բացատրել հայ վրացական պատերազմի հետևանքները. 1919 թ. հունվարի 9-17-ը Թիֆլիսում հայ-վրացական հաշտության կոնֆերանսում որոշվեց Լոռին ժամանակավորապես հայտարարել «չեզոք» գոտի, իսկ Ախալքալաքը (Ջավախքը, մնալով վիճելի տարածք, փաստացի մնաց վրացական կողմի վերահսկողության ներքո:

Դաս 2. Հայ-ադրբեջանական հարաբերությունները /մաս 2/

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք էին հայ-ադրբեջանական վիճելի տարածքները:
2. Ի՞նչ իրադրություն էր տիրում Արցախում 1920 թ գարնանը:
3. Ե՞րբ և ու՞մ կողմից Արցախը հռչակվեց ՀՀ անբաժանելի մաս:
4. Ու՞մ շնորհիվ Զանգեզուրում կազմակերպվեց ինքնապաշտպանություն:
5. Ի՞նչ հետևանք ունեցավ Ադրբեջանի խորհրդայնացումը հայ-ադրբեջանական հարաբերություններում:
6. Ի՞նչ հետևանքներ ունեցավ Նախիջևանի կորուստը Հայաստանի համար:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայ-ադրբեջանական հարաբերություններում վիճելի տարածքներ էին Արցախը (Լեռնային Ղարաբաղը), Զանգեզուրը, Շարուր-Նախիջևանը:
2. 1920 թ. գարնանը ադրբեջանական բանակը և տեղի մուսուլմանական զինված խմբերն անցան լայնածավալ հարձակման, հայկական ուժերի կողմից հակահարված ստանալուց հետո դաժան կոտորածներ և ավերածություններ իրականացրեցին Շուշիում և շրջակա գյուղերում:
3. Ապրիլին Դրոյի և Նժդեհի ջակատներն ազատագրեցին Արցախը և Արցախահայության ինքնորոդ համագումարում 1920 թ. ապրիլին Արցախը հռչակվեց ՀՀ անբաժանելի մաս:
4. Զանգեզուրում ինքնապաշտպանությունը գլխավորում էր սպարապետ Գարեգին Նժդեհը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Քարտեզի վրա ցույց տալ Արցախը /Լեռնային Ղարաբաղ/, Նախիջևանը, Զանգեզուրը, Լոռին, Ախալքալաքը/ Ջավախք/:
2. Վերլուծել Ռուսաստանի՝ թուրք-ադրբեջանամետ դիրքորոշման հետևանքը ՀՀ համար:
3. Բացատրել, որ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Հայաստանի նկատմամբ ռուս-թուրք-ադրբեջանական ճնշումներն ավելի սաստկացան:
4. Բացատրել, որ Նախիջևանի կորստով ՀՀ-ն զրկվեց Իրանի հետ կապվելու կենսական հնարավորությունց :
5. Արժևորել Գ. Նժդեհի պատմական կերպարը՝ որպես Զանգեզուրի զոյապայքարի կազմակերպիչ, առաջնորդ, ազատարար:

Դաս 3. Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում: Սևրի պայմանագիրը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ և ի՞նչ նպատակով էր հրավիրվել Փարիզի վեհաժողովը:
2. Ովքե՞ր էին ներկայացնում Հայկական պահանջները Փարիզի վեհաժողովում:
3. Ե՞րբ և ի՞նչ պայմաններում է տեղի ունեցել Անկախ և Միացյալ Հայաստանի հռչակումը և արտաքին քաղաքական ի՞նչ նշանակություն է ունեցել:
4. Ե՞րբ է Անտանտի երկրների կողմից ճանաչվել ՀՀ-ն:
5. Ե՞րբ և ու՞մ միջև է ստորագրվել Սևրի պայմանագիրը:
6. Որքա՞ն էր կազմելու Հայաստանի տարածքը Վիլսոնի իրավարար վճռի համաձայն:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Փարիզի խորհրդաժողովը հրավիրվել է 1919 թ. հունվարին:
2. Փարիզ էր մեկնել հայկական 2 պատվիրակություն՝ ՀՀ պատվիրակությունը Ավ. Ահարոնյանի և Ազգային պատվիրակությունը Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ:
3. 1919 թ. մայիսի 28-ին հռչակվեց Անկախ և Միացյան Հայաստանի հռչակագիրը:
4. 1920 թ. հունվարի 19-ին ՀՀ-ն դե-ֆակտո ճանաչվել է Անտանտի երկրների ԳԽ կողմից:
5. Սևրի պայմանագիրը ստորագրվելէ Անտանտի երկրների / Հայաստանը՝ Անտանտի փոքր դաշնակից / և Օսմանյան Թուրքիայի միջև 1920թ. օգոստոսի 10-ին:
6. ԱՄՆ նախագահ Վիլսոնը 1920 թ. նոյեմբերի 22-ին հայտնեց իր իրավարար վճիռը հայ-թուրքական սահմանազատման մասին, որով ՀՀ տարածքը կազմելու էր 160.000կմ^2:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Փարիզի խորհրդաժողովը հրավիրվել է Անտանտի և Առաջին աշխարհամարտում պարտված առանձին երկրների միջև հաշտություն կնքելու նպատակով:
2. Բացատրել, որ Անկախ և Միացյան Հայաստանի հռչակումը խորհրդանշելու էր աշխարհամարտից հետո հայկական հողերի վերամիավորման հեռանկարը: և հիմնավորել Միացյալ Հայաստանի անկախության հռչակման անհրաժեշտու-թյունն ու քաղաքական նշանակությունն արտաքին հարաբերություններում:
3. Քարտեզի վրա ցույց տալ ՀՀ սահմանները մինչ Սևր, Սևրի պայմանագրով նախա-տեսվող և Սևրից հետո:
4. Հիմնավորել Սևրի պայմանագրի և Վիլսոնի իրավարար վճռի չիրագործման պատճառահետևանքային կապերը՝ ելնելով Թուրքիայի ներքաղաքական զարգացումներից և Մեծ տերությունների դիվանագիտական խաղերից:

Դաս 4. Իրադրությունը Կիլիկիայում և կիլիկիայահայությունը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ էր կոչվում 1916 թ. հիմնականում հայ կամավորներից ստեղծված զորաջոկատը:
2. Կիլիկիայի ո՞ր բնակավայրերում քեմալականները իրականացրեցին իրենց հայաջինջ քաղաքականությունը:
3. Ե՞րբ, ո՞ր երկրի հովանու ներքո և ու՞մ գլխավորությամբ հռչակվեց Կիլիկիայի ինքնավարությունը:
4. Ինչու՞ Կիլիկիան զիջվեց Թուրքիային:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1916 թ. հիմնականում հայ կամավորներից ստեղծված զորաջոկատը կոչվեց Արևելյան /Հայկական/ լեգեոն:
2. Քեմալականները իրենց հայաջինջ քաղաքականությունը Կիլիկիայում իրականացրեցին Մարաշում, Հաճընում, Այնթապում և այլ հաշատ վայրերում:
3. 1920 թ. օգոստոսին Ադանայում Ֆրանսիայի հովանու ներքո հռչակվեց Կիլիկիայի ինքնավարությունը՝ Հայ ազգային պատվիրակության Կիլիկիայի լիազոր ներկայացուցիչ Միհրան Տամատյանի գլխավորությամբ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Հիմնավորել քեմալականների՝ սուլթանական և երիտթուրքական ցեղասպան քաղաքականության շարունակող լինելը:

2. Վերլուծել Ֆրանսիայի երկդիմի դիրքորոշումը. Ֆրանսիան կտրականապես դեմ էր հայկական ինքնավարությանը և Թուրքիայից զիջումների ակնկալիքներով, երկդիմի քաղաքականության արդյունքում, 1921 թ. ֆրանս-թուրքական պայմանագրով Կիլիկիան հանձնվեց Թուրքիային:

Գլուխ 3.
Հայաստանի առաջին Հանրապետության անկումը
Դաս 1. Հայաստանը Խորհրդային Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի քաղաքականության ոլորտում

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր տարածքները հայտարարվեցին «բուն թուրքական» հողեր՝ ըստ «Թուրքական ազգային ուխտ»-ի:
2. Ի՞նչ նպատակով և ու՞մ գլխավորությամբ 1920թ մայիսին Մոսկվա մեկնեց հայկական պատվիրակությունը:
3. Ե՞րբ և ո՞ւմ գլխավորությամբ սկսվեց թուրքական բանակի հարձակումը Հայաստանի վրա:
4. Ե՞րբ թուրքերը գրավեցին Կարսը, ինչու՞ է Կարսի գրավումը համարվում պատերազմի ամենաամոթալի էջերից մեկը:
5. Ինչու՞ ՀՀ-ն պարտվեց պատերազմում:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Ըստ «Թուրքիայի ազգային ուխտ»-ի «բուն թուրքական տարածքներ» հայտարարվեցին ոչ միայն Արևմտյան Հայաստանը, Կիլիկիան,այլ նաև Արևելյան Հայաստանի որոշ շրջաններ:
2. 1920 թ մայիսին Մոսկվա մեկնեց խորհրդարանի փոխնախագահ Լևոն Շանթի գլխավորած պատվիրակությունը:
3. 1920 թ. սեպտեմբերի 23-ին թուրքական 50 հազար զորքի հարձակումով, որի հրամանատարը Քյազիմ Կարաբեքիրն էր:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Լևոն Շանթի գլխավորությամբ Մոսկվա մեկնած պատվիրակության նպատակը Ռուսաստանի կողմից Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչումն էր:
2. Բացահայտել, որ Կարսի գրավումը համարվում է պատերազմի ամենաամոթալի էջերից մեկը, քանի որ անառիկ համարվող Կարսը գրեթե առանց դիմադրության թուրքերին հանձնվեց 1920 թ. հոկտեմբերի 30-ին, չնայած այն փաստին, որ այնտեղ կար բավարար զենք ու զորք: Գերի ընկան բազմաթիվ զինվորներ, այդ թվում՝ զորահրամանատարներ:
3. Վերհանել, որ պատերազմում ՀՀ պարտության գլխավոր պատճառը ՀՀ միայնակ մնալն էր թուրքական բանակների դեմ:

Դաս 2. ՀՀ խորհրդայնացումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ Երևան ժամանեց Բ. Լեգրանի պատվիրակությունը և ի՞նչ արդյունք տվեցին հայ-ռուսական երևանյան բանակցությունները:
2. Ի՞նչ ներքաղաքական իրավիճակ էր տիրում Հայաստանում 1920 թ. աշնանը:
3. Ռազմահեղափոխական կոմիտեն ու՞մ գլխավորությամբ մտավ Հայաստան:
4. Ե՞րբ կնքվեց Երևանի համաձայնագիրը:
5. Ե՞րբ կնքվեց Ալեքսանդրապոլի պայմանգիրը: Ինչու՞ այն չգործեց :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1920 թ. հոկտեմբերին Երևան ժամանեց Բ. Լեգրանի պատվիրակությունը, որն առաջարկում էր խորհրդայնացնել Հայաստանը:
2. Բանակցություններն ավարտվեցին Եզրափակիչ որոշման արձանագրությամբ, ըստ որի վերականգնվելու էր 1914 թ. սահմանային գիծը, Ռուսաստանը Հայաստանին տրամադրելու էր 2,5 մլն ռուբլի:
3. 1920 թ, Հայաստանի ներքաղաքական իրավիճակը լարված էր, որի արդյունքում տեղի ունեցավ իշխանափոխություն:
4. Սարգիս Կասյանի գլխավորությամբ Ադրբեջանից ՀՌՀԿ-ն մտավ ՀՀ տարածք և երկիրը հռչակեց խորհրդային սոցիալիստական հանրապետություն:
5. 1920 թ. դեկտեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը ստորագրվեց Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը, որով ՀՀ կառավարությունն ընդունում էր խորհրդայնացման առաջարկությունը:
6. 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը Հայաստանի նախկին կառավարության պատվիրակությունը Ալ. Խատիսյանի գլխավորությամբ Ալեքսանդրապոլում ստորագրվեց թուրք-հայկական հաշտության պայմանագիր:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Ըստ ժամանակագրության թվարկել առանցքային առնվազն 3 փաստ:
2. Դիրքորոշում հայտնել 1920 թ երկրորդ կեսին Ռուսաստանի և Թուրքիայի հակահայ նպատակների վերաբերյալ:
3. Համեմատել Երևանի համաձայնագրի և Ալեքսանդրապոլի պայմանագրերը, հիմնավորել, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրման պահին արդեն անօրինական էր և մնաց թղթի վրա, քանի որ ստորագրող կողմերից մեկը արդեն չուներ օրինական իշխանություն:

ԲԱԺԻՆ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Դաս 1. Խորհրդային իշխանության հաստատումը : Փետրվարյան ապստամբությունը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ովքե՞ր են եղել Հայաստանի Ռազմահեղափոխական Կոմիտեի ևՀայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի առաջին նախագահները:
2. Բացատրեք ռազմական կոմունիզմ , Չեկա , ՆԷՊ, ՌՀԿ հասկացությունները:
3. Ովքե՞ր և ինչու՞ կազմակերպեցին Փետրվարյան ապստամբությունը:
4. Ինչո՞ւ պարտվեց Փետրվարյան ապստամբությունը:
5. Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Խորհրդային Հայաստանում ապստամբության ճնշումից հետո:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. ՀՌՀԿ առաջին նախագահն է եղել բոլշևիկ Սարգիս Կասյանը: Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի առաջին նախագահը եղել է Ալեքսանդր Մյասնիկյանը :
2. Փետրվարյան ապստամբությունը սկսվել է 1920 թ փետրվարին, որի նպատկն էր Հայաստանում խորհրդային իշխանության տապալումը:
3. Ապստամբությունը ճնշելուց հետո բռնությունները մեղմացան , սկսվեց ՆԷՊ-ի ժամանակաշրջանը , ստեղծվեց Ժողովրդական Տնտեսության խորհուրդը , մտցվեց պարենհարկը :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել հետևյալ հասկացություններից առնվազն 2 ը.
- Ռազմական կոմունիզմ –տնտեսական միջոցառում , որի կենտրոնում պարենմասնատրումն էր:
- Չեկա – արտակարգ հանձնաժողով , որի գործառույթը քաղաքական բռնությունների և խորհրդային կարգերի հաստատումն էր:
- ՌՀԿ-ռազմահեղափոխական կոմիտե՝ խորհրդային կարգերի հաստատման համար ստեղծված բոլշևիկյան մարմին:
- ՆԷՊ_տնտեսական միջոցառումների առաջադիմական համակարգ , որի մեջ կենտրոնական տեղը հատկացված էր պարենային հարկին:

2. Բացատրել, որ բոլշևիկների իշխանության գալով սաստկացան բռնությունները, ստեղծվեց Չեկան և կուտակված դժգոհությունները հանգեցրին ՀՅԴ-ի Հայաստանում գտնվող գործիչների կողմից Փետրվարյան ապստամբության սկսմանը:
3. Ապստամբությունը պարտվեց, քանի որ Հայաստանի բոլշևիկների թիկունքում կանգնած էր Խորհրդային Ռուսաստանը:
4. Արտահայտի իր վերաբերմունքը ՀԽՍՀ գոյության առաջին տարիներին բոլշևիկների վարած քաղաքականության նկատմամբ:

Դաս 2. ՀԽՍՀ տարածքային հիմնախնդիրները և արտաքին կապերը /Մաս 1 /

1. Լոռու , Ջավախքի , Զանգեզուրի , Արցախի և Նախիջևանի խնդիրները

[Թեմատիկ պլան]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր տարածքների պատճառով էին առաջացել ՀԽՍՀ և հարևանների միջև հակասությունները:
2. Ե՞րբ և ինչպիսի՞ լուծում է ստացել Լոռու և Ջավախքի տարածքային խնդիրները
3. Ե՞րբ և ինչպիսի՞ լուծում է ստացել Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի տարածքային խնդիրները:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Իր հարևաններից երեքի հետ ՀԽՍՀ-ն ուներ տարածքային խնդիրներ. Ադրբեջանի հետ՝ Լեռնային Ղարաբաղի , Զանգեզուրի և Նախիջանի, Վրաստանի հետ՝ Լոռու և Ջավախքի , Թուրքիայի հետ՝ Արևմտյան Հայաստանի:
2. Լոռու և Ջավախքի հարցը լուծվել է 1921 թ նոյեմբերի 6-ին , որով Լոռու մեծ մասն անցավ ՀԽՍՀ-ին , բացառությամբ Հյուսիսային Լոռու, իսկ Ջավախքն անցավ Վրաստանին:
3. Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի տարածքային խնդիրները լուծվեցին հետևյալ կերպ.

- Լեռնային Ղարաբաղը 1921 թ. հուլիսի 5-ին տրվեց Ադրբեջանին, որի կազմում 1923 թ ստացավ ինքնավար մարզի կարգավիճակ :
- Զանգեզուրը Գարեգին Նժդեհի և Սյունիքի գյուղացիության համառ մարտերի արդյունքում մնաց ՀԽՍՀ կազմում :
- Նախիջանը 1921 թ մարտի 16-ի Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով տրվեց Ադրբեջանին , որի կազմում հետագայում այն ստացավ ինքնավար հանրապետության կարգավիճակ :

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Ըստ ժամանակագրության թվարկել տվյալ ժամանակրջանի ՀՀ տարածքների հետ կապված կարևոր իրադարձությունները:
2. Քարտեզի ցույց տալ քարտեզի վրա այն տարածքները, որոնց շուրջ Հայաստանն ուներ հարևան երկրների հետ հակասություններ:

Դաս 3. ՀԽՍՀ տարածքային հիմնախնդիրները և արտաքին կապերը /մաս 2/

2. Հայկական տարածքների հարցը Մոսկվայի և Կարսի 1921 թ պայմանագրերում : ՀԽՍՀ արտաքին կապերը

[Թեմատիկ պլան]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ե՞րբ և որտե՞ղ է հրավիրվել թուրք-ռուսական երկրորդ կոնֆերանսը:
2. Ովքե՞ր են ղեկավարել հայկական, թուրքական, ռուսական պատվիրակու-թյունները կոնֆերանսին :
3. Ե՞րբ է կնքվել Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը և ի՞նչ անուն ստացավ:
4. Ե՞րբ և որտե՞ղ է հրավիրվել թուրք-անդրկովկասյան կոնֆերանսը, ինչո՞վ է ավարտվել այն: Ո՞վ էր ներկայացնում հայկական պահանջները:
5. Ի՞նչ հետևանք ունեցան Մոսկվայի և Կարսի պայմանագրերը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Թուրք-ռուսական երկրորդ կոնֆերանսը տեղի է ունեցել 1921 թ. փետրվար մարտ ամիսներին և ավարտվել է մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով:
2. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը կոչվեց «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագիր:
3. Թուրք-ռուսական երկրորդ կոնֆերանսում հայկական պատվիրակության ղեկավարն էր Ալ. Բեկզադյանը, թուրքականը՝ Յուսուֆ Քեմալը, ռուսականը՝ Ի. Ստալինը:
4. Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսը հրավիրվել է 1921թ. սեպտեմբեր հոկտեմբեր ամիսներին Կարսում և ավարտվել է հոկտեմբերի 13 ի Կարսի պայմանագրով: Հայկական պահանջները ներկայացնում էր Ա. Մռավյանը:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Առանձնացնել Մոսկվայի և Կարսի պայմանագրերի՝ Հայաստանին առնչվող երկու երեք կետ: Մոսկվայի պայմանագրով հայ-թուրքկական սահմանն անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերով, Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը անցնում էին Թուրքիային: Նախիջևանը որպես ինքնավար տարածք փոխանցվում էր Ադրբեջանին՝ երրորդ պետությանը՝ Հայաստանին չզիջվելու պայմանով: Կարսի թուրք-անդրկովկասյան պայմանագրով վերահաստատվեց Մոսկվայի պայմանա-գիրը՝ ըստ որի Արևելյան Հայաստանի տարածքներից Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Նախիջևանը օտարվեցին և տրվեցին Թուրքիային և Ադրբեջանին:
2. Քարտեզի վրա ցույց տալ Հայաստանի սահմանների փոփոխությունները Մոսկվայի և Կարսի պայմանագրերի արդյունքում:

3. Դիրքորոշում հայտնել Քեմալա-խորհրդային հակահայ դիրքորոշման վերաբերյալ: Մոսկվայի և Կարսի պայմանագրերի դրույթներն օրինական չեն, քանի որ ոչ Ռուսատանը, ոչ էլ Թուրքիան որևէ իրավասություն չունեին առանց հայկական կողմի տնօրինել հայկական տարածքների և հայ ժողովրդի ճակատագիրը:

Դաս 4. <u>ՀԽՍՀ Սահմանադրությունը : Խորհրդային Հայաստանն Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմում</u>

<u>Թեմատիկ պլան</u>

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել 1922- 1936 թթ.:
2. Անդրկովկասյան պետություններից ո՞րը և ի՞նչ դիրքորոշում ուներ խորհրդային երկրների միավորման առաջարկների վերաբերյալ:
3. Ե՞րբ ընդունվել ՀԽՍՀ առաջին Սահմանադրությունը:
4. Ի՞նչ են նշանակում հետևյալ հապավումները. ՀԽՍՀ, ԽՍՀՄ, ԱԽՍՀԴՄ:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Խորհրդային երկրների միավորման առաջարկների վերաբերյալ Անդրկովկասի երեք պետությունների դիրքորոշումն այսպիսին էր.

- Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը կողմ էր , քանի որ դրանով Ադրբեջանի տարածքային ձգտումները լիովին բավարարվում:
- Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության համար միավորման այս ձևը ստեղծված իրավիճակում ուներ զուտ պաշտպանական նշանակություն և տնտեսական – մշակութային զարգացման հեռանկարի հույս:
- Վրաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը դեմ էր, քանի որ կարծում էր, որ խորհրդային միավորման այս ձևը սահմանափակում է երկրների արտաքին ինքնուրույնությունը

2. ՀԽՍՀ առաջին Սահմանադրությունը ընդունվել է 1922թ. փետրվարի 3-ին:

Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. .Ըստ ժամանակագրության թվարկել հետևյալ իրադարձություններից առնվազն երկուսը. ՀԽՍՀ խորհուրդների առաջին համագումարի բացումը, ԱԽՍՀԴՄ-ի ստեղծումը, ԽՍՀՄ ստեղծումը, ԱԽԴՍՀ-ի կազմալուծումը:
2. Արտահայտել իր վերաբերմունքը, կարծիքը ՀԽՍՀ-ի խորհրդային միավորումների մաս կազմելու վերաբերյալ :
3. Կատարել համապատասխանեցում

	Հապավում		Բացատրություն
1	ՀԽՍՀ	1	Հայկական խորհրդային սոցիալիստական հանրապետություն
2	ԽՍՀՄ	2	Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միություն
3	ԱԽՍՀԴՄ	3	Անդրկովկասի խորհրդային սոցիալիստական հանրապետությունների դաշնային միություն
4	ԱԽԴՍՀ	4	Անդրկովկասի խորհրդային դաշնային սոցիալիստական հանրապետություն